№ 82 ՇԱԲԱԹ 19 ԱՊՐԻԼԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 19 ԱՊՐԻԼԻ № 82

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.
Սպրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը—85 կ.:
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:
ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆԻ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
1914 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդագինը 10 ռուբլին, ԶՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 3 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրէժնի:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
սրանով յայտարարում է, որ այսօր, շաբաթ, Ընկերութեան պատուոր անդամ և
ԲԱՐԵՐԱՐ
Ա. Լ Է Ք Ս Ա Ն Դ Ր
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ
մահվան երրորդ տարեդարձի օրը, նշանակված է հոգեհանգիստ հանդուցեալի դամբարանի վրա, Վանքի եկեղեցու բակում: Հոգեհանգստի սկիզբը ժամը 1-ին:
344. 1—1

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԵԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ և Մանկավարժական Գօմիտէտը սրանով յայտարարում են, որ այսօր, ապրիլի 19-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Դպրոցի պատուոր վերակացու և բարերար
Ա. Լ Է Ք Ս Ա Ն Դ Ր
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ
մահվան երրորդ տարեդարձի օրը, նշանակված է յիշեալ Դպրոցում
347. ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ 1—1

ՄՆԱՑԱԿԱՆ ԵԳՕՐՕՎԻՉ ՓՐԻԴՕՆԵԱՆԸ յայտնում է, որ կիրակի, ապրիլի 20-ին
ԳՐԻԳՈՐ ԵԳՕՐՕՎԻՉ
ՓՐԻԴՕՆԵԱՆԻ
մահվան տարելիցին, Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցում կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ: Պատարագի սկիզբը առ. ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը՝ ցերեկվայ ժամը 12-ին:
348. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԱՄԱՐԱՅԻՆ ԾԻՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 4-ԻՆ
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ
ՄԵԾ ՁԲՕՍԱՆՔ
Ցօդուտ ՁՐԻ և ԷԺԱՆԱԳԻՆ ՀԱՇԱՐԱՆՆԵՐԻ ու ԹԷՅԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿ.
առ. 345. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Երժանցած մեծ պարգևի: Վաճառվում են ՌՈՒՍԱՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում:
Փաբրիկային իսկական գներով:
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պատասներ վերջին ոճի, ինչպէս էժանագիներ, նոյնպէս և թանգարժէքներ: Բացառապէս լրիւ չափսն է 11¼ արշ. երկար.:
Սկզբնական նմուշները ուղարկվում են ՁՐԻ և օտար քաղաքներում:
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обоз фабрики Вр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(հ. հ.) առ. 309. 50—3

ՁԻՐԿ
Գ. ԻՒՊԱՏՕՎԻ
Այսօր, շաբաթ, ապրիլի 19-ին, մայրաքաղաքների օրինակով, չեռած ներկայացում: Շաբաթ օրերի երեկոյեան ներկայացումների ծրագիրը մայրաքաղաքներում կազմված է լինում ընտրեալ նօմէրներից, և հասարակութիւնը սիրով յաճախում է այդ ներկայացումներին: Այսօր ամեն ինչ նոր էլ: Ամեն ինչ օրիգինալ! Նոր տրիկներ! Նոր կատարումներ! Այսօր մասնակցում են. հասարակութիւնից սիրված՝ գեղեցկուհի օր. Ելենա Իւպատովա, պատկառելի ակրոբատներ Բոսսինի ընտանիքը, գէրբի-ժոկէյ Անդրեանովը, անօրինակելի երաշխա-էկցենտրիկներ պ. պ. Բոզէտտիները և այլք: ԱՋԻ.—Կիրակի, ապրիլի 20-ին, կը տրվի երկու ներկայացում. ցերեկը յատկապէս երեխաների և աշակերտութեան համար:
Ցերկի վերատեսուչ՝ Գ. Իւպատով
Կառավարիչ՝ Լ. Խուդոնով
առ. 344. 1—1

ՔԻՒՐԴՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

II

«Кавказъ» թերթը գտնում է, որ Քիւրդստանը ըստ ցեղի, լեզուի, կրօնի և կենցաղի մի ամբողջ և միաձոյլ տարր է: Ճիշդ է,—ասում է նա,—այդ ամբողջային (անձև, չը բիւրեղացած) քաղաքական մարմնի մասերը գտնվում են դեռ բիւրեղացման շրջանում, բայց պէտք է դիտմամբ կոյր և խուլ լինել չը դիտակցելու համար, որ «Կուրմանջի-Բէյլիկի» (քիւրդական բէյլութիւն) գաղափարը այժմ դառնում է իրողութիւն և ժողովրդական մասսաներով ու հերոսներով է աճում:

Միւս կողմից՝ քիւրդ մտաւորականները, թէև շատ սահմանափակ թւով, գտնում են, որ քիւրդերը պէտք է անկախութիւն ձեռք բերեն, ազատվեն թիւրքական վարչութիւնից և ինքնավարութեամբ կառավարվեն:

Բայց հնարաւո՞ր է այդ այն պայմաններում, որոնց մէջ գտնվում են քիւրդերը. կարո՞ղ են նրանք կազմակերպվել իբրև կուլտուրական և քաղաքական միութիւն:

Ահա այդ հարցն էր, որ մենք յարուցինք անցեալ անգամ և որի մասին կը կամենայինք յայտնել մեր կարծիքը:

Ամեն մի ցեղ, տարր, քաղաքական և կուլտուրական մի զանգուած, միութիւն կազմելու համար պէտք է ունենայ մի քանի անհրաժեշտ պայմաններ, որոնք են հող, լեզու, գրականութիւն, պատմութիւն, կրօն, անցեալ կուլտուրա: Արդ, ի՞նչ են ներկայացնում քիւրդերը: Նրանք, հայերի պէս, ապրում են երեք պետութիւնների մէջ՝ Ռուսաստան, Պարսկաստան, Թիւրքիա: Առաջին երկրում նրանց թիւը մօտ 200,000 է իսկ երկրորդում՝ 500,000, երրորդում՝ 850,000. բայց նրանք սաստիկ ցրված են և թափառական, վաչկատուն կեանք են վարում, սկսեալ Վանի, Էրզրումի բարձր լեռնադաշտերից մինչև Մուսուլ և Դիարբէքիրի դաշտերը և Արարատից մինչև Սիւլէյմանիէ: Նրանք խօսում են բազմաթիւ տարբեր և միմեանց համար անհասկանալի բարբառներ. նրանք չունեն, իրանց ցրված լինելու պատճառով, ոչ ազգային և ոչ լեզուի միութիւն. նրանք չունեն գաղափար հայրենիքի մասին, որովհետև հէնց ամենահին ժամանակներից նրանք վարել են ասատանական, թափառական կեանք և ոչ մի տեղ հաստատ բնակութիւն չեն ունեցել, ինչպէս չունեն և այսօր:

Զուրկ լինելով հաստատուն, նստակեաց կեանք, պարապելով գլխաւորապէս աւարառութեամբ և խաշնարածութեամբ—զբաղմունքներ, որոնք անհրաժեշտ են կացուցանում տոհմական վաչկատուն կեանքը—քիւրդերը բնականաբար անկարող եղան ստեղծել որևէ կուլտուրական գրականութիւն, պատմութիւն, գեղարուեստ, արդիւնաբերութիւն, հոգևոր-բարոյական-մշտատոր կեանք:

Հայերն ևս ցրված են մեծ տարածութեան վրա, բայց նրանք, շնորհիւ նստակեաց, հաստատուն բնակութեան, ամենահին ժամանակներից սկսած ձգտել են ստեղծել կուլտուրական կեանք և ստեղծել են գիր, գրականութիւն, պատմութիւն, ազգային ինքնուրոյն եկեղեցի, գեղարուեստ, արդիւնաբերութիւն. մի խօսքով մի ամբողջ ինքնուրոյն հոգևոր-բարոյական-մտաւոր կեանք: Հէնց կեանք, ստեղծագործական կեանք: Հետևաբար, համեմատել հայերին քիւրդերի հետ անհնարին է:

Եւ ուրեմն, քանի որ քիւրդերը ներկայացնում են մի ամբոխային, չը բիւրեղացած զանգուած, քանի որ նրանք չունեն հաստատ բնակավայր, հող, չունեն գիր, գրականութիւն և կուլտուրա, քանի որ նոյն իսկ կրօնով միաձոյլ չեն—որովհետև թէև մուսուլման, բայց պատկանում են երկու այնպիսի տարբեր աղանդների՝ սիւննի և շիա, որոնք իրար ատում են—նրանք չեն կարող երբևիցէ կազմել մի քաղաքական կամ կուլտուրական միութիւն, չեն կարող ստեղծել իրանց համար մի ինքնավար քաղաքական մարմին, չեն կարող քաղաքակրթ ազգերի շարքում այնպիսի դիրք բռնել, դեր խաղալ, ինչպէս կարող էր բռնել և խաղալ հայ ազգը, եթէ սա վերածվեր մի քաղաքական և կուլտուրական ինքնավար մարմնի:

Քննենք այժմ այն հարցը, թէ ի՞նչ դիրք պէտք է բռնեն հայերը ինքնավար Քիւրդստանի վերաբերմամբ:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— o —

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Դիշերս անցաւ ուժեղ ուրագան, որ առաւօտեան ժամը 5-ի մօտերը Նէվայի ջուրը բարձրացրեց սովորականից 7 ֆուտով. հարթավայրերը ջրի տակն են. ուրագանը մեծ աւերածութիւններ է գործել:

Ուրագանը անցել է գաւառի վրայով ձիւնի հետ խառն:

Ջրի տակն են մայրաքաղաքի ցածր մասերը, կղզիները, նաւահանգիստը: Մի քանի հարիւր նաւակներ պոկվեցին իրանց տեղերից: Մի քանի տասնեակ փոքր նաւեր շը-պրտվել են ափը. 200 նաւ ջուրը քշել տարել է: 30 նաւակ անցան ջրի տակ: Առաւօտը քամին սկսեց թուլանալ: Փոթորկից փչացել են հեռախօսի թելերը Մոսկվայի և Կրօնշտատի հետ:

Ուրագանի ժամանակ վնասվեց աէրօդրոմը. մի քանի աէրօպլան փչացել են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Հրատարակված է, որ Արմաւիրը վերածվում է քաղաքի:

Դատական բարենորոգումների դումայան մասնաժողովը որոշեց անցնել այն օրէնսդրական առաջարկութիւնների յօդուածային ընթերցման, որոնք վերաբերում են Պետական Դումայի և Խորհրդի անպատասխանատուութեան խնդրին, և հաստատեց մի առանձին մասնաժողով համապատասխան օրէնսգիծեր մշակելու համար լրացումով, թէ Դումայի կողմից կարող է ընտրվել յատուկ կարգապահ դատարան, որը և ձեռնհաս կը լինի քննելու պատգամաւորական խօսքը ի չարը գործադրողներին պատշաճ պատիժ տալու խնդիրը, անգամ այդպիսիներին Դումայի կազմից հեռացնելու իրաւունքով:

Դատական բարենորոգումների մասնաժողովը ցանկալի գտաւ այն առաջարկութիւնը, որպէսզի վերացվեն մահմեդականների համար սահմանված սահմանափակումները երդուեալ հաւատարմատարների դասը մտցնելիս: Հրէաների հարցը յետաձգվեց կվօրումի բացակայութեան պատճառով:

Ժող. կրթութեան մասնաժողովը ընդունեց Սամարայում պոլիտեխնիկում հիմնելու օրինագիծը:

Ներքին գործերի մինիստրութիւնը նահանգապետներին ուղարկեց այն զեկավարիչ հրահանգները, որոնք վերաբերում են արբեցողութեան դէմ մաքառելու միջոցներին, որոնց իրագործումը անհրաժեշտ է ներկայանում դնել գիւղացիների գործերը անօրինող վարչութիւնների վրա ի կատարումն Բարձրագոյն ցանկութեան:

ՊԷՐՄ.— Դատաստանական պալատում սկսվեց գերմանացի օդաչուներ Բերլինէրի, Հաղէի և Նիկոլայի գործի քննութիւնը:

ԱՋՕՎ.—Ծովի վրա փոթորիկ է:

ԵԱԼՏԱ.—Եկաւ սինոդի օբէր-պրօկուրորը:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ.—Պետրօվսկի գործարանում յայտարարվեց ընդհանուր գործադուլ մետաղական հողի վրա:

Կ. ՊՕԼԻՍ.—Ստորագրվեց պայմանագիր Արմատրօնգ ֆիրմայի հետ նաւահանգիստներ ու զինանոցներ Ոսկեղջիւրում կառուցանելու մասին: Թիւրք հասարակական շրջաններում այդ առիթով մեծ ուրախութիւն է տիրում: Բացի նաւահանգիստներից ու զինանոցներից՝ յիշեալ ֆիրման Թիւրքիայի համար կառուցանելու է մի նոր դրէդնօուտ ևս «Բէյղադէ» տիպից էլ խոշոր:

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Կարանցան համաձայնեց մտցնել այն հարցերի թւում, որոնց վերաբերելու է մինչնորդութիւնը—բացի այն խնդրից, թէ ի՞նչպիսի վերաբերմունք է ունենալու Խուէրտան դէպի Մէքսիկայի Պետութիւնները—նաև Մէքսիկայի յեղափոխութեան հարցը: Վիլսոնը և Բրայանը այդ առիթով դոհունակութիւն յայտնեցին: Լիակատար համաձայնութիւն կապելու յոյսերն աւելանում են:

ՎԻԵՆՆԱ.—Կայսրի առողջական դրութեան մէջ առանձին փոփոխութիւններ չը կան: Կայսրն այսօր էլ որոշ ժամանակ անցրեց բաց պատուհանի առաջ:

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Ունգարական պատգամաւորութեան զինուորական գործերի մասնաժողովում զինուորական մինիստր Կրօբատինը մատնանշեց, որ զինուորական մինիստրութեան ծախքերը ներկայ բիւջէային տարում հաւասարվում են 575,939,415 կռօնի. «Դումարը,—ասաց մինիստրը,—ի հարկէ խոշոր է, բայց Ունգարիայի կրած զինուորական բեռը անհամեմատ սակաւ է այլ երկիրներից»:

ԲԵՐԼԻՆ.—Վերջնական հաշուով Բերլինը իր արուարձաններով միասին պէտք է վճարէ 145 միլիոն մարկի միանուագ զինուորական հարկ:

ՏՕԿԻՕ.—«Ասախին» յայտնում է, որ քննութիւնը պարզել է, թէ նաւատորմի մէջ երևան հանված զեղծումներին մեղսակից են ծովային բարձրաստիճան պաշտօնեաները, ի թիւս որոց մինիստրի օգնական Տակարաբէն: Ծովային նոր մինիստրը կարգադրել է դատի ենթարկել մեղաւորներին: «Կօնդօ» յածանաւի պատուէրի համար դանագան անձինք վարձատրութիւն ստացել են մի միլիօնից աւելի:

ՊԷԿԻՆ.—Սահմանադրական մասնաժողովը երրորդ ընթերցումից յետոյ ընդունեց սահմանադրութեան բարենորոգման նախագիծը, որ ընդլայնում է պրեզիդենտի իրաւունքները: Ադմինիստրացիայի գլուխ կանգնած է պրեզիդենտը. նրա աշխատակիցներ հանդիսանում է պետական քարտուղարը և 9 մինիստրներ, որոնց նշանակում է պրեզիդենտը: Նախագծված է հաստատել խորհրդատու մարմին պրեզիդենտին կից, որ խորհրդի հաւանութեամբ կարող է արձակել պարլամենտը և չը հրատարակել պարլամենտից հաւանութիւն գտած օրէնքները: Մինչև պարլամենտի գումարումը խորհուրդը կատարելու է նրա գործունէութիւնը:

ՊԱՆԱՄԱ.—Վճռված է նաւերի երթևեկութիւնը Պանամայի Ջրանցքով բանալ ապրիլի 27-ից:

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ԱԹԷՆՔ.—Թրակիայից արտաքսված 7000 յոյն եկել են Սալոնիկ: Պաշտօնապէս արձանագրված է, որ յոյներն արտաքսվում են վերից տրվող կարգադրութեան համաձայն: Բօլսսօ փախածների թիւը 20,000-ից անցնում է: Քննութեան համար եկած ռուսաց դեսպանատան քարտուղար Մօրէնշիլդը և հիւպատոսական գործակալները հարկադրված են մի քանի անգամ մեկնել, որպէսզի թոյլ չը տան թիւրքերին յարձակվել փախստականների վրա:

ԲՕԴՕՍՏՕ.—Թագաւոր Կայսրը 10,000 ռուբլի է ուղարկել յօգուտ Թիւրքիայից փախածների:

ԲԵԼԳՐԱԴ.—Սերբ պատգամաւոր Ստօյանովիչը մեկնեց Աթէնք՝ ստորագրելու պայմանագիր Սալոնիկում ազատ նաւահանգիստ բանալու մասին՝ սերբական արտահանութեան համար:

ՅԷՏԻՆԻԷ.—Սկուպշտինան սկզբունքով ընդունեց բիւջէի օրինագիծը:

ՈՒԼՍՏԷՐԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատ: Ուլստերի հարցի քննութեան ժամանակ Բոնարլօուն ասաց. «Ասկվիթը պէտք է ընդունէ, որ մեզ սպառնացող դժբաղդութիւնը սարսափելի է: Անհրաժեշտ է հաշտութեան ձգտել: Եթէ ասկվիթը յիրաւի հաշտութեան է ձգտում, ապա ուրեմն մենք նոյնպէս ամեն բան կանենք, որպէսզի դիւրացնենք հարցի խաղաղ լուծումը»:

Չերչիլլէնի առաջարկութեամբ վերսկսվեցին կառավարութեանը պարտաւանք յայտնելու առաջարկութեան յարակից վիճաբանութիւնները: Բալֆուրը իր ճառի մէջ Չերչիլլին անուանում է գործակալ-պրօվոկատօր, ընդգծում է քաղաքացիական պատերազմի սոսկումները: Կարսօնը ասում է, որ նա նոյնպէս մտածում է մի ելք գտնել ներկայ դժուարին կացութիւնից. եթէ բիլլն անցնէ, այն դէպքում Կարսօնի ցանկութիւնն է, որպէսզի իրլանդական կառավարութիւնը մնայ իր կոչման բարձրութեան վրա. Ուլստերը կը յարվէր նրան յանուն իր սեփական շահերի: Ասկվիթը, ըստ արժանոյն պատասխանելով Կարսօնին, ասաց, որ կառավարութիւնը ձգտում է հարթելու հարցը, սակայն համաձայնութիւնը պէտք է բաւարարեցնէ իրլանդացիների երկու կողմերին և Անգլիայի երկու խոշորագոյն կուսակցութիւններին. այլ պայմաններով համաձայնութիւն անկարելի է: Պարտաւանք յայտնելու առաջարկութիւնը մերժվում է 344 ձայնով ընդդէմ 264-ի:

Քաղաքական տեղեակ շրջանների ընդհանուր կարծիքով՝ պալատում տեղի ունեցած վիճաբանութիւններից յետոյ պէտք է սպասել, որ խաղաղ համաձայնութիւն կայանայ ուլստէրեան հարցի առիթով:

ԲԻԼՖԱՍՏ.— Բանդօրի նաւահանգստում խարխսի են ձգել մի յածանաւ և 10 հակակառնանաւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

— o —

ՔԻՒՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Մի անգամ այս էջերում *) տողերիս գրողը այն կարծիքն էր յայտնել, որ բէֆորմները Թիւրքիային ամենևին ձեռնտու չեն, և թւել էի մի շարք պատճառներ:

Այդ պատճառները հիմնված էին բացառապէս Թիւրքիայի և նրա մահմեդական ժողովրդի կուլտուրական յետամնացութեան վրա:

Թէ անցեալում և թէ այժմ մարդիկ կամ

*) «Մշակ» № 152, 1913 թ.

ազգեր միմեանց վրա իշխելու համար գործ են ածում երկու գլխաւոր զէնքեր՝ ֆիզիքական և բարոյական զէնքեր, հուր ու սուր կամ գիտութիւն, քաղաքակրթութիւն։

Ֆիզիքական ոյժի թագաւորութիւնը, որ յենած է կոպիտ զէնքերին, իրաւ՝ հեռաւէ տեղի է տալիս այն չափով, ինչ չափով մարդկութիւնը քաղաքակրթվում է, բարոյապէս ուժեղանում է. այնու ամենայնիւ երկրագնդիս վրա դեռ կան մարդիկ, դասակարգեր ու պետութիւններ, որոնք չեն կարողացել և չեն կարող ցած դնել հուր ու սրի նման կոպիտ զէնքերը։

Թիւրքիան իր գոյութեան ամեն մի քայլափոխում ցոյց է տուել, որ պատկանում է վերջիններիս թւին, որ նա անպայման կը կորչէ, կանհետանայ այն բոպէից, երբ կը հրաժարվի հրով և սրով իշխելու քաղաքականութիւնից։

Վերյիշելով միահեծանութեան պատմութիւնը, տեսնում ենք, որ ամեն տեղ էլ հպատակներին ղսլողը, բռնի հնազանդութեան մէջ կամ՝ աւելի ճիշդը՝ սարկութեան մէջ պահողը եղել է կոպիտ ոյժը, նոյնքան վայրենի, անգութ ու դաժան, որքան Թիւրքականը։

Արիւնոտ տառերով է արձանագրված պատմութիւնը այն օրհասական կռիւների, որոնք տեղի են ունեցել ճնշված ազգերի և միահեծանօրէն իշխող, տիրապետող դասակարգերի միջև։ Մինչև որ որոշ ազգեր ու ցեղեր կարողացել են բռնապետութիւնը տապալելով՝ երկրի կառավարութեան դեկը իրանց ձեռքն առնել, նրանք ահագին ժամանակ են վատնել, շատ թանգագին զոհեր են տուել, արիւն, եռանդ և ոյժ սպառել։

Ի նկատի առնելով այն, որ ազատագրական կռիւները տեղի են ունեցել գլխաւորապէս Եւրոպայում, Թիւրքիային շատ մօտիկ, նոյնիսկ նրա հարևան երկիրներում, այստեղից հարց է ծագում թէ՝ ինչու կամ ինչպէս եւրոպական ցամաքի այդ նախատակն բիծը, Թիւրքիան, կարողացել է պահպանել իր միահեծանութիւնը թէկուզ մի քանի տարվայ կեանք ունեցող սահմանադրական դիմակի տակ անգամ։

Մի թէ Թիւրքիայում քիչ արիւն է թափվել, մի թէ Թիւրքիայի հպատակները քիչ զոհեր են տուել։

Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք այն խոշոր տարբերութեան մէջ, որ գոյութիւն ունի եւրոպական և Թիւրքական կռիւների առաջնորդող սկզբունքների միջև։

Մի քանի խօսք այդ տարբերութեան մասին։

Առաջնում՝ Եւրոպայում ժողովուրդը կռուում էր միահեծան իշխանութեան դէմ, այն է՝ անպատասխանատու կերպով իշխող, ճնշող ու հարստահարող մի որոշ դասակարգի դէմ։ Եւ կռիւը սեպարատ տենդենց չունէր, պետութեան կամ երկրի ամբողջութեան ոչ մի վտանգ չէր սպառնում։ Հենրիկոսներ, Լուդովիկներ, Ֆիլիպներ և Նապոլէոններ այժմ չը կան. նրանց գահը վաղուց խորտակվել է։ Բայց Ֆրանսիան, որպէս պետութիւն, շարունակում է իր գոյութիւնը և այն՝ աւելի երջանիկ, քաղաքակիրթ, հարուստ ու հզօր։

Սրա հակառակ՝ Թիւրքիայում կռիւը միշտ սեպարատ տենդենց է ունեցել և շատ յաճախ վերջացել է անդամահատութիւններով։ Զը հաշուելով Ռուսաստանի և Աւստրիայի գրաւած երկիրները, Թիւրքիայից պարբերաբար անջատվել են բումիները, յոյները, չէրնոզորցիք, սերբերը, բոլգարները և այլք, իսկ վերջին անգամ նաև Ալբանիան։

Եւ սա շատ բնական է։ Թիւրքիայում յեղափոխական կռիւները երբէք ընդհանուր ժողովրդական չեն եղել, այլ մասնաւոր, ցեղային։ Զը հաշուելով վերջին յուլիսեան յեղափոխութիւնը իր կեղծութեամբ, երբ մահմեդական ու քրիստոնեայ զործում էին ձեռք-ձեռքի տուած, երբէք մահմեդական տարրը չէ միացել յեղափոխական շարժումներին, այլ, ընդհակառակը, իր բարբարոսական ամբողջ ոյժով անցել է կառավարութեան կողմը։ Եւ այսպիսով՝ կռիւը ուղղված չէ եղել իշխող դասակարգի դէմ, այլ մի ամբողջ ցեղի՝ մահմեդականութեան դէմ՝ հանդերձ իր մահմեդական սուլթաններով, փաշաներով ու զորքով։

Այսպիսի պայմաններում կարելի չէր մահմեդական իշխանութիւնը տապալելով միենոյն ժամանակ պահպանել երկրի ամբողջութիւնը։

Զէ՞ որ յանուն Թիւրքիայի ամբողջութեան հրատարակվեց սահմանադրութիւն, ապա տապալվեց Համիդը։ Բայց նայեցէք, թէ ինչ տարբերութիւն կայ Համիդի միահեծան իշխանութեան և ներկայ սահմանադրական իշխանութեան միջև։ Ի՞նչ տարբերութիւն Թիւրքիայի մահմեդականութեան վերաբերմունքի միջև առաջ և այժմ։

Երիտասարդ-Թիւրքերի սահմանադրական շրջանում նոյնպէս թալանվում, հալածվում ու ջարդվում են քրիստոնեայ հպատակները մահմեդականութեան ձեռքով, որպէս և միւս հեծան Համիդի թագաւորութեան շրջանում։

Թիւրքիան բաղդաւոր է հէնց նրանով, որ ճնշված փոքրիկ ազգերի քաղաքական շահերի մէջ չը կայ հաճամանութիւն, որով նրանց միացումը միանգամայն անհնարին է։ Եթէ չը լինէր քաղաքական շահերի ներհակութիւն և հանդէս գար Թիւրքիայում բաւականաչափ ուժեղ տարր, որ կարողանար տապալել սուլթանների իշխանութիւնը, դա համազօր կը լինէր մահմեդականութեան տապալման։ Եւ այն ժամանակ Թիւրքիան կը դադարէր մահմեդական պետութիւն լինելուց։

Ո՞ր տեսակէտից էլ ուզում էք՝ վերցրէք, Թիւրքիայի ամբողջութեան պահպանման միտքը աբսուրդ է և նա պէտք է վերջանայ մանակի բաժանումներով։ Այս ճշմարտութիւնը շատ լաւ են հասկացել այդ պետութեան այլացեղ հպատակները, որով նրանք երբէք չեն կուզել իշխանութեան ձեռ փոխելու համար, այլ նրանից անջատվելով, մի անգամ ընդմիշտ նրա լծից ու հպատակութիւնից ազատվելու համար։

Կարելի է ասել, որ Թիւրքիայի հպատակներից հայն է միակը, որ իրան շրջապատող անպատասխանատու պայմանների շնորհիւ՝ մինչև վերջն էլ անջատողական ձգտում չէ ունեցել։ Հայը սահմանադրութեան ամենանախկին բարեկամը եղաւ, բայց՝ որպէս վարձատրութիւն՝ պատժվեց այնքան անգութ կերպով, որ այժմ նա էլ իր փրկութեան յոյսը մահմեդական իշխանութեան մէջ չէ որոնում, թէկուզ սահմանադրականից նա վերածվի ռամկավարականի։

Բարենորոգումներ օտար վերահսկողութեան տակ՝ ահա թէ ինչի վրա է դրել իր յոյսը Թիւրքիացի հայը։

Բայց այն ժամանակ, երբ բէֆորմների գործը թղթից ու խօսքից գործի անցնելու շրջանն է մտել, Թիւրքիայից մահմեդական խլրտումների ձայներ են լսվում։ Ի հարկէ, բաշխման և դանձման և պատրիարքարանի վերակազմութեան կանոնագրերը։

Կրթական ծրագրով կէտ նպատակի ունենք ոչ միայն ուսում և գիտութիւն ջամբել մեր մանկտւոյն, այլ և պարտաճանաչ ու արթուն դաստիարակներ հասցնել, որոնք օժտեն նորահաս սերունդն առաքինի սկզբունքներով և զարդարեն անոնց հոգին ու միտքն արդիւնաւոր թեկադրութիւններով։

Ամենայն Հայոց արժանընտիր Ս. Հայրապետը, որուն մատուցանել կը խնդրենք այս առթիւ ևս մեր երախտագիտական և որդիական ջերմ զգացումները, արդէն գրոց գիւտի և տպագրութեան կրկնակ յոբելեանները առթիւ կոչում ըրած էր կրթական ֆոնդի մը հաստատութեան, որ կարենայ դիւրացնել դաւառի հայութեան կրթական պէտքը։ Ըղձալի է, որ պարտ ու պատաճ մղումը տրուի այս օգտաշատ ձեռնարկին իրագործման։

Միւս կողմէ՝ վանօրէից բարեկարգութեամբ կարելիութիւն պիտի ունենայ ազգը դպրոցներ ունենալու գլխաւոր վանական հաստատութեանց մէջ և անոնց հասոյթով մատակարարելու զանոնք, պատրաստելու համար դաւառային հովուութեան կարող եկեղեցականներ, որոնց անհրաժեշտութիւնը շատ զգալի է։

Եւ որովհետև լաւ վերակազմութեան մը օրինակը պէտք է նախ կեդրոնէն տալ, ազգային տրոց բաշխումն ու դանձումը գործնական ձևի մը վերածելու ջանքերը պէտք է կրկնապատկուին, որպէսզի կարելի ըլլայ ի գլուխ հանել միանգամայն պատրիարքարանի վերակազմութեան ու եկեղեցական հաւասարակշռութեան գործը, որ այնքան անհրաժեշտ է։

Բոլոր այս խնդիրները, տարակոյս չունինք որ, ձեր բարձր սրբազնութեան գլխաւորութեամբ, վարչութեան ուշադրութեան առարկայ պիտի ըլլան և ազգ. ժողովը իր մասին չպիտի վարանի փութացնել հարկ եղածը՝ պահպանելու համար ներդաշնակութիւնը, նախապատուութիւն տալով միշտ այս էական խնդրոց, և պիտի աշխատի բառնալ իր մէջէն այն պատճառները, որոնք դժբաղդաբար շատ անգամ արգելք կըլլան հանրային շահուց հետ կապ ունեցող կարևոր խնդիրներու կարգադրութեան։

Սրբազան հայր, երկիրը մեծ և ծանր ճգնաժամէ մը անցաւ, որուն հետևանքները թէև մի քիչ ատեն ևս զգալի կրնան ըլլալ, սակայն այն բարենորոգմանց ծրագիրները, որոնց գործադրութեան հետամուտ է օսմանեան բարեխնամ կառավարութիւնը թէ ի հայաբնակ գաւառս և թէ միւս նահանգներուն մէջ, սպեղանի պիտի ըլլան անցեալն դառնութեանց և պիտի թոյլատրեն ողջունել յառաջդիմութեան և բարեկեցութեան շրջան մը, որուն այնքան պէտք ունի օսմ. պետութիւնը և որուն անբաժան և շինարար մէկ տարրն է հայ ազգը։ Կը կրկնենք, որ մեր կանոնաւորութեան և բարգաւաճման պայմաններէն մին օսմ. կայսրութեան միւս տարրերուն բարեկամութիւնն ու զարգացումն է, որուն պէտք է ցանկայ և ձգտի իւրաքանչիւր հայ անհատ իր կարողութեան չափով, օրինասիրութեամբ և համերաշխ ոգւով։

Ս. Յարութեան տօնին առթիւ ներկայելով մեր շնորհաւորութիւնները, արդիւնաւորութիւն կը մաղթենք ձեր բարձր սրբազնութեան դնահատելի և իմաստուն ջանքերուն։

Դրամագրական ՀԱՐՑԵՐ

Զատկի տօնի առթիւ Թիւրքահայոց ազգային ժողովի ատենապետ սենատոր Գաբրիէլ Նորատունկեան և ազգային կենտրոն. վարչութեան ատենապետ դոկտ. Դաւիթեան, դիմելով պատրիարքին, արտասանել են հետևեալ ճառերը, որոնց պատասխանել է պատրիարքը։

Գաբրիէլ Նորատունկեանի ճառը

Ամենապատիւ սրբազան հայր.

Յանուն ազգ. ժողովոյ, մայր դիւանս բարեբաղդութիւն ունի շնորհաւորելու ձեր ամենապատուութեան ս. Զատկի տօնը, առիթ համարելով յայտարարելու, թէ չպիտի կամի և չպիտի դանդաղի ձեր բարձր սրբազնութեան և նորընտիր վարչութեան գործոց ու աշխատութեան զօրավիգն ըլլալ, կարգադրելով այն կարևոր խնդիրները, որոնք ընդփոյթ լուծման և յարդարման պէտք ունին և կամ իր օրակարգին մէջն են։

Հարկ չէ ըսել թէ վարչութեան սեղանին վրայ գտնուած խնդրոց մէջ առաջին տեղը գրաւած է Եղուսաղէմի վանուց բարեկարգութեան խնդիրը, որ շատ իսկ երկարաձգեցաւ ի վնաս այդ դարաւոր մեծ հաստատութեան և ի դայթակղութիւն մեր հանրային գործելակերպին։ Ժամ է, որ վերջ տրուի միանգամ ընդ միշտ անոր դժբաղդացուցութեան և ըմբռնուի այն ծանր պատասխանատուութիւնը, զոր պատմութիւնը պիտի դնէ ամեն անոնց վրայ, որ այդ հոյակապ վանքին հետ կապ ունին ու անձնական գծուծ հաշիւներով պատճառ կըլլան անմխիթար և կործանարար ուղղութեան մը։

Ցայտնի է ձեր բարձր սրբազնութեան, որ ազգ. ժողովը փափագ ունի ժամ առաջ պատրաստուած և լրացած տեսնել ազգային կրթութեան յատուկ կանոնագիրը, վանօրէից բարեկարգութեան, ազգային տուրքի հաւաքման և դանձման և պատրիարքարանի վերակազմութեան կանոնագրերը։

Կրթական ծրագրով կէտ նպատակի ունինք ոչ միայն ուսում և գիտութիւն ջամբել մեր մանկտւոյն, այլ և պարտաճանաչ ու արթուն դաստիարակներ հասցնել, որոնք օժտեն նորահաս սերունդն առաքինի սկզբունքներով և զարդարեն անոնց հոգին ու միտքն արդիւնաւոր թեկադրութիւններով։

Ամենայն Հայոց արժանընտիր Ս. Հայրապետը, որուն մատուցանել կը խնդրենք այս առթիւ ևս մեր երախտագիտական և որդիական ջերմ զգացումները, արդէն գրոց գիւտի և տպագրութեան կրկնակ յոբելեաններուն առթիւ կոչում ըրած էր կրթական ֆոնդի մը հաստատութեան, որ կարենայ դիւրացնել դաւառի հայութեան կրթական պէտքը։ Ըղձալի է, որ պարտ ու պատաճ մղումը տրուի այս օգտաշատ ձեռնարկին իրագործման։

Միւս կողմէ՝ վանօրէից բարեկարգութեամբ կարելիութիւն պիտի ունենայ ազգը դպրոցներ ունենալու գլխաւոր վանական հաստատութեանց մէջ և անոնց հասոյթով մատակարարելու զանոնք, պատրաստելու համար դաւառային հովուութեան կարող եկեղեցականներ, որոնց անհրաժեշտութիւնը շատ զգալի է։

Եւ որովհետև լաւ վերակազմութեան մը օրինակը պէտք է նախ կեդրոնէն տալ, ազգային տրոց բաշխումն ու դանձումը գործնական ձևի մը վերածելու ջանքերը պէտք է կրկնապատկուին, որպէսզի կարելի ըլլայ ի գլուխ հանել միանգամայն պատրիարքարանի վերակազմութեան ու եկեղեցական հաւասարակշռութեան գործը, որ այնքան անհրաժեշտ է։

Բոլոր այս խնդիրները, տարակոյս չունինք որ, ձեր բարձր սրբազնութեան գլխաւորութեամբ, վարչութեան ուշադրութեան առարկայ պիտի ըլլան և ազգ. ժողովը իր մասին չպիտի վարանի փութացնել հարկ եղածը՝ պահպանելու համար ներդաշնակութիւնը, նախապատուութիւն տալով միշտ այս էական խնդրոց, և պիտի աշխատի բառնալ իր մէջէն այն պատճառները, որոնք դժբաղդաբար շատ անգամ արգելք կըլլան հանրային շահուց հետ կապ ունեցող կարևոր խնդիրներու կարգադրութեան։

Սրբազան հայր, երկիրը մեծ և ծանր ճգնաժամէ մը անցաւ, որուն հետևանքները թէև մի քիչ ատեն ևս զգալի կրնան ըլլալ, սակայն այն բարենորոգմանց ծրագիրները, որոնց գործադրութեան հետամուտ է օսմանեան բարեխնամ կառավարութիւնը թէ ի հայաբնակ գաւառս և թէ միւս նահանգներուն մէջ, սպեղանի պիտի ըլլան անցեալն դառնութեանց և պիտի թոյլատրեն ողջունել յառաջդիմութեան և բարեկեցութեան շրջան մը, որուն այնքան պէտք ունի օսմ. պետութիւնը և որուն անբաժան և շինարար մէկ տարրն է հայ ազգը։ Կը կրկնենք, որ մեր կանոնաւորութեան և բարգաւաճման պայմաններէն մին օսմ. կայսրութեան միւս տարրերուն բարեկամութիւնն ու զարգացումն է, որուն պէտք է ցանկայ և ձգտի իւրաքանչիւր հայ անհատ իր կարողութեան չափով, օրինասիրութեամբ և համերաշխ ոգւով։

Ս. Յարութեան տօնին առթիւ ներկայելով մեր շնորհաւորութիւնները, արդիւնաւորութիւն կը մաղթենք ձեր բարձր սրբազնութեան դնահատելի և իմաստուն ջանքերուն։

Դոկտ. Դաւիթեանի ճառը

Ամեն ս. պատրիարք հայր,

Զատկի այս տօնին առթիւ պատիւ ունիմ յանուն ազգ. վարչութեան շնորհաւորել ձեր բարձր սրբազնութիւնը և երկար ու երջանիկ կեանք մը մաղթել։ Նորընտիր վարչութիւնը գործի ձեռնարկած պահուն իսկ ուրախութեամբ տեսաւ, թէ հայկական գաւառներու բարենորոգմանց հարցն արդէն լման մը յանդած է և սահմանադրական կառավարութիւնն ապահովիչ յոյսեր կը տարածէ մեզ, թէ փութով ու բարեացակամ ոգիով մը պիտի սկսի անոր գործադրութեանը։ Գաւառի հայ ժողովրդեան համար այնքան կենսական հարցի մը ձեր սրբազնութեան պատրիարքութեան օրով լուծում մը գտած ըլլալը մեծապէս շնորհաւորելի է և մեր ամենուն երախտագիտութեանը արժանի, նոյնպէս Եւրոպայի հայ պատուիրակութեան արժանայարգ նախագահը, իր ընկերներն և բոլոր անոնք, որ հեռուէն կամ մօտէն աշխատեցան։ Մեզի կը մնայ ուրեմն լրջօրէն պատրաստուիլ ամեն խոհական միջոցները գործադրելու, լայնօրէն կարենալ օգտուելու համար բարենորոգմանց սոյն ծրագրէն։

Միւս կողմանէ սակայն, վարչութիւնը բաւական բարդ խնդիրներ գտաւ իր սեղանին վրայ։ Տեղ տեղ ընդունայն պայքարներ, աւելորդ վիճաբանութիւններ, կռիւ, ընդվզում ազգ. իշխանութեան դէմ, կարգապահութեան ոգւոյն պակաս, քննադատութեան, ամբաստանութեան մարմաջ մը, վերջապէս բարոյական բոլոր այն խաթարումները, որոնք կարգելին հասարակութեան մը բնականոն ու ազատ զարգացումն ու յառաջդիմութիւնը։

Վարչութիւնը լիայոյս է սակայն, որ հայուն վաղամեծօթ ողջմտութիւնը պիտի գայ վերջապէս ապացուցանելու, թէ հայը բարոյապէս մնանկ ազգ մը չէ։ Այդ ուղղութեամբ սիրայօժար կը տրամադրենք մեր ոյժերն և պատրաստ ենք գործակցելու ձեր սրբազնութեան ջանքերուն։

Ձեզ նման կորովի, գործունեայ և ազգասէր պատրիարքի մը օրով ազգային գործերը վարելու կոչուած ըլլալնիս բարեբաղդութիւն մը կը համարինք և չենք տարակուսիր, թէ պիտի գիտնաք ազգու կոչ մը ուղղել ձեր հօտին համերաշխական ոգւոյն, բոլորիս զանոնք ազգ. իշխանութեան շուրջը և լուսութեան ու խաղաղութեան մէջ աշխատիլ հանգստութեանն ու զարգացմանը գաւառի այն դժբաղդ ժողովուրդին, որ իրապէս արժանի է ամեն հոգածութեան և մեզմէ կը սպասէ գործ և ոչ խօսք։

Այս ակնկալութեամբ կրկին ու կրկին կը շնորհաւորենք Զատիկը և կը մաղթենք ձեր սրբազնութեան կարողութիւն և առողջութիւն։

Պատրիարքի պատասխանը

Շնորհակալութիւններս՝ յայտնուած շնորհաւորական բարեմաղթութեանց համար։ Կուզեմ քանի մը խօսքով պատասխանել այն փաստաբանութեան, որ արտայայտուեցան այստեղ պատ. երեսփոխանութեան և վարչութեան ատենապետներուն կողմէ։ Սովորութիւն եղած է Զատկի և Ծնունդի երկրորդ օրերուն հաւաքուիլ այստեղ և համարաւորութիւնն ընել անցեալ դէպքերուն և գործադրելի յոյսերուն։ Ունինք անշուշտ, ինչպէս գիտէք, ներքին և արտաքին խնդիրներ։ Ներքին խնդիրներուն մէջ բարենորոգմանց խնդիրն առաջնութիւն ունի։ Ինչպէս կը յիշէք, 3—4 ամիս առաջ, երբ հաւաքուեցանք այստեղ, ամենէն աւելի խօսեցայ այս խնդրին վրայ։ Յունուարի վերջերուն միայն ծրագիր մը ստորագրուեցաւ, և օսմ. բարեխնամ կառավարութիւնը յանձն առաւ հայաբնակ նահանգներուն մէջ գործադրել բարենորոգումներ, որոնցմով տանելի պիտի ըլլայ բոլոր ազգերուն կեանքը։ Երկար տարիներէ ի վեր կը սպասուէր ողջունելու այս բարենորոգումները. բարեբաղդ պիտի ըլլանք, եթէ ի մօտոյ տեսնենք մենք անոնց գործադրութիւնը՝ յօգուտ երկրին և կառավարութեան տեսանելիութեան։ Մենք ըսելով՝ կուզեմ հասկցնել մեր գաւառի եղբայրները, որոնք իրենց կարգին պիտի աջակցին անշուշտ կառավարութեան, արդիւնաւոր ընծայելու համար անոր ջանքերը։ Ցայտնի է, որ դրուած այս օրէնքները չպիտի ունենան իրենց անմիջական օգտակարութիւնը, եթէ ժողովուրդը չաջակցի կառավարութեան։

Գաւառի հայ ժողովուրդը՝ իբրև ամենէն զարգացած տարրը՝ ամենէն աւելի «հառաչանքի հովտում» շնչող գաւառական լրագրողն ուղղակի անծանօթ է այս բոլորին. կարծես արցունքի հեղեղը նրան չի հասնում, նրա փեղերը չի թրջում...

Գաւառական «կամաւոր» թղթակցի ձեռքի տակ եղած տեղեկութիւններն ու դիտողութիւնները շատ անգամ հակասական են, իրականութեան միանգամայն անհամապատասխան։

Գաւառական թղթակցի նստակեաց կեանքը, նեղ, լճացած միջավայրը, գրական գործունէութեան անհնարաւոր պայմանները ուղղակի հնարաւորութիւն չեն տալիս նրան նուիրվել երկրի ուսումնասիրութեան, ամբողջապէս տարվել ժողովրդի անծայր ցաւերով, տեսնել, անձամբ զգալ հսկայ զանգուածի հոգեկան տարուումները և լուռ տանջանքները... Այս է միակ պատճառը, որ մեր հասարակական ըմբռնումը պակասվում է մամուլում չափազանց միակողմանի, անսրտոյ, շատ անգամ աղճատված և անչափ աղօտ...

Ահա ինչու ժամանակակից պարբերական հայ օրագրութիւնն ոչ թէ կեանքի հայելին է, այլ հալուէ նրա ստուերանկարը։

Մի քանի տարի առաջ, դեռ ևս ամբարային ամիսներում ռուս հեռատես մտածողները միաբերան գուժեցին քաւութեան նոխազ գիւղացիութեան պատմական ահաւոր թշնամու՝ կործանարար վիշապ-սովի մահաբեր այցը։

Ռուս մարմնչող, առաջադէմ ու անկաշառ մամուլը բարձրացրեց իր ահաղնագղորդ ձայնը. հրաւիրեց հասարակական հիմնարկութիւններին և գործիչներին անխնայ կռիւ մղելու ժողովրդական մեծ աղէտի դէմ...

Սրբութիւնն երեսուն արծաթով վաճառող դեղին մամուլը դիւային հոհոռոցով ծաղրեց բազմամիլիոն ժողովրդին սպառնացող մահաշունչ վտանգը։

Ռուս մամուլի գլխաւոր օրգանները և հասարակական հիմնարկութիւններն ամենաչափ կազմակերպեցին խելացի հիմունքների վրա դրված խոշոր անկետաներ և հրապարակ հանեցին իրանց աշխատակիցների ամբողջ գումարտակը։

Ռուս համբերատար, շրջնկատ նարոդնիկ-լրագրողը մտաւ ազգաբնակութեան ամենատարբեր խաւերի մէջ, այցելեց ամենախուլ, ամենամոռացված վայրեր, շրջեց հազարաւոր վերստեր, ծանօթացաւ գաւառի, նահանգի սոցիալական ու տնտեսական ծանր պայմանների հետ. ականատես եղաւ գիւղացու մարտիրոսագրութեան, այն գիւղացու, որ դարեր շարունակ «ապրել է առնասունից էլ վատ, կատարել է տաժանակիր աշխատանք, ենթարկվել է սովի ու քաղցի անլուր տանջանքներին. անհամար կարիքներից ճմլված՝ մնացել է կոպիտ, կեղտի մէջ թաղված, անհաղթ, կտրտածոտ, փոխադարձ յարդանքից զուրկ, անտարբեր ու թալամարթ» (Ա. Չեխով, «Мужики»)։

Մի քանի ամսից յետոյ ամբողջ երկրի բէալ կեանքն իր բնական գոյներով, մամուլի միջոցով, դրվեց հրապարակ, դարձաւ ողջ հասարակութեան քննութեան միակ առարկան։

Գիւղացիութեան ծով կարիքներին ու ցաւերին շատ մօտ ծանօթ Տանի «Голодная деревня» կամ Կոնվալովի «Очерки современ. деревни» կամ Ե. Սօլոգուբի «Գաւառական տեսութիւններն» աւելի շատ բան պարզեցին, աւելի կենդանի փաստեր մատակարարեցին մեզ, թէ փութով ու բարեացակամ ոգիով մը պիտի սկսի անոր գործադրութեանը։ Գաւառի հայ ժողովրդեան համար այնքան կենսական հարցի մը ձեր սրբազնութեան պատրիարքութեան օրով լուծում մը գտած ըլլալը մեծապէս շնորհաւորելի է և մեր ամենուն երախտագիտութեանը արժանի, նոյնպէս Եւրոպայի հայ պատուիրակութեան արժանայարգ նախագահը, իր ընկերներն և բոլոր անոնք, որ հեռուէն կամ մօտէն աշխատեցան։ Մեզի կը մնայ ուրեմն լրջօրէն պատրաստուիլ ամեն խոհական միջոցները գործադրելու, լայնօրէն կարենալ օգտուելու համար բարենորոգմանց սոյն ծրագրէն։

Միւս կողմանէ սակայն, վարչութիւնը բաւական բարդ խնդիրներ գտաւ իր սեղանին վրայ։ Տեղ տեղ ընդունայն պայքարներ, աւելորդ վիճաբանութիւններ, կռիւ, ընդվզում ազգ. իշխանութեան դէմ, կարգապահութեան ոգւոյն պակաս, քննադատութեան, ամբաստանութեան մարմաջ մը, վերջապէս բարոյական բոլոր այն խաթարումները, որոնք կարգելին հասարակութեան մը բնականոն ու ազատ զարգացումն ու յառաջդիմութիւնը։

Վարչութիւնը լիայոյս է սակայն, որ հայուն վաղամեծօթ ողջմտութիւնը պիտի գայ վերջապէս ապացուցանելու, թէ հայը բարոյապէս մնանկ ազգ մը չէ։ Այդ ուղղութեամբ սիրայօժար կը տրամադրենք մեր ոյժերն և պատրաստ ենք գործակցելու ձեր սրբազնութեան ջանքերուն։

Զեզ նման կորովի, գործունեայ և ազգասէր պատրիարքի մը օրով ազգային գործերը վարելու կոչուած ըլլալնիս բարեբաղդութիւն մը կը համարինք և չենք տարակուսիր, թէ պիտի գիտնաք ազգու կոչ մը ուղղել ձեր հօտին համերաշխական ոգւոյն, բոլորիս զանոնք ազգ. իշխանութեան շուրջը և լուսութեան ու խաղաղութեան մէջ աշխատիլ հանգստութեանն ու զարգացմանը գաւառի այն դժբաղդ ժողովուրդին, որ իրապէս արժանի է ամեն հոգածութեան և մեզմէ կը սպասէ գործ և ոչ խօսք։

Այս ակնկալութեամբ կրկին ու կրկին կը շնորհաւորենք Զատիկը և կը մաղթենք ձեր սրբազնութեան կարողութիւն և առողջութիւն։

Պատրիարքի պատասխանը

Շնորհակալութիւններս՝ յայտնուած շնորհաւորական բարեմաղթութեանց համար։ Կուզեմ քանի մը խօսքով պատասխանել այն փաստաբանութեան, որ արտայայտուեցան այստեղ պատ. երեսփոխանութեան և վարչութեան ատենապետներուն կողմէ։ Սովորութիւն եղած է Զատկի և Ծնունդի երկրորդ օրերուն հաւաքուիլ այստեղ և համարաւորութիւն ընել անցեալ դէպքերուն և գործադրելի յոյսերուն։ Ունինք անշուշտ, ինչպէս գիտէք, ներքին և արտաքին խնդիրներ։ Ներքին խնդիրներուն մէջ բարենորոգմանց խնդիրն առաջնութիւն ունի։ Ինչպէս կը յիշէք, 3—4 ամիս առաջ, երբ հաւաքուեցանք այստեղ, ամենէն աւելի խօսեցայ այս խնդրին վրայ։ Յունուարի վերջերուն միայն ծրագիր մը ստորագրուեցաւ, և օսմ. բարեխնամ կառավարութիւնը յանձն առաւ հայաբնակ նահանգներուն մէջ գործադրել բարենորոգումներ, որոնցմով տանելի պիտի ըլլայ բոլոր ազգերուն կեանքը։ Երկար տարիներէ ի վեր կը սպասուէր ողջունելու այս բարենորոգումները. բարեբաղդ պիտի ըլլանք, եթէ ի մօտոյ տեսնենք մենք անոնց գործադրութիւնը՝ յօգուտ երկրին և կառավարութեան տեսանելիութեան։ Մենք ըսելով՝ կուզեմ հասկցնել մեր գաւառի եղբայրները, որոնք իրենց կարգին պիտի աջակցին անշուշտ կառավարութեան, արդիւնաւոր ընծայելու համար անոր ջանքերը։ Ցայտնի է, որ դրուած այս օրէնքները չպիտի ունենան իրենց անմիջական օգտակարութիւնը, եթէ ժողովուրդը չաջակցի կառավարութեան։

Գաւառի հայ ժողովուրդը՝ իբրև ամենէն զարգացած տարրը՝ ամենէն աւելի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

• ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

Ստացանք Ախալցխայից՝ (պ. Յ. Զաթալպաշեանի միջոցով) հանգուցեալ տիկին Դ. Օսոփեանի դպրոցական ֆոնդին կտակած 10 ռուբլին։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 49) ունենք ստացած ընդամենը 120 ռուբլի։

Ռոստով Դ/վ., 12 ապրիլի

Փոխադրեցի սինօդ այսօր 1850 ռ., որը ստացել եմ հետևեալ անձերից. Նոր-Նախիջևանի փոխադարձ վարկի ընկերութիւնից 500 ռ., Յովնանեան առևտրական տնից 500 ռ., տիկ. և պ. Անպէչաքեանների միջնորդութեամբ 620 ռ., Վարվառէ Թավանիսկից 100 ռ., Ս. Քաշալեանից և Զ. Ռուստամեանից 50-ական ռուբլի, Գ. Սախաճեանից 25 ռ., Յ. Ղարագեօզեանից 5 ռ.։ Սրանից առաջ ևս փոխադրել էի 26,649 ռ. 20 կ.։ Ուրեմն մինչև այսօր փոխադրել եմ ընդամենը 28,499 ռ. 20 կ.։ Գր. Զալխուշեան

ԵՐԿՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

II

«Այստեղ եւ այնտեղ»

Անդրկովկասի շատ գաւառներում և մասնաւորապէս Երևանի լայնատարած նահանգում, երկար ու ձիգ տարիներ շարունակ բազմազլխեան Հիդրան՝ կործանարար սովը հիւծել, մաշել և խեղդամահ է արել անպաշտպան, բազմաչարչար գիւղացիութիւնը։

Ներկայումս նոյն նահանգի շատ շրջաններում ազգաբնակութեան աշխատաւոր դասը մեզ համար նորութիւններ չեն, միայն թէ հասած լուրերը աւելի սպառնական են։ Բանը նրանումն է, որ քիւրդերը լաւ հրացաններով ու գնդակացիներով զինված յարձակվում են Բիթլիսի նման մի քաղաքի վրա։ Կառավարութիւնն էլ իր կողմից չի հերքում այդ լուրերը, այլ հաւաստիացնում է, որ քիւրդական շարժումը իրան՝ կառավարութեան դէմ է։

Բայց ինչու. քիւրդերը ըէֆորմներ կամ աւտոնոմիա՞ են պահանջում, որոնց մասին, ամիսներ առաջ, կառավարութեան թելադրութեամբ խօսվում էր մամուլի մէջ։

Ի հարկէ ոչ. ինչպէս գողերն ու գայլերը մութ գիշեր են սիրում և թշնամի են լոյսի, օրէնքի, արդարութեան, այնպէս և քիւրդերն ու Թիւրք կառավարութիւնը թշնամի են բարենորոգումներին։ Եւ այժմ, երբ տարածուած Թիւրքերի թելադրութեամբ, քիւրդերը ոտքից գլուխ զինված կռւում են կառավարութեան դէմ, իբր թէ զժգոհ այն բանից, որ նա հայկական նահանգներին ըէֆորմներ է տուել։

Սա Թիւրքիայի վերջին օրհասական յոյսն է։ Բայց այդ յոյսը հարիւր անգամ աւելի թոյլ է, քան էր նա 1878 և 1905 թուականներում։

Ուրեմն նոյն չափով թոյլ է նաև 95 թուականի արիւնոտ դէպքերի կրկնութեան հաւանականութիւնը։

Այն ժամանակ բացի այն, որ Թիւրքիայի ձեռքը բռնող չը կար, ընդհակառակը՝ կային քաջալերողներ։

Այժմ մի քանի պատճառներով մենք կարող ենք սանձասիրտ նայել քիւրդական շարժումներին, նոյնիսկ եթէ մի քանի մասնակի դէպքեր էլ պատահելու լինեն։

Հայկական հարցի քննութեան ընթացքում տեղի ունեցած դիւանագիտական բանակցութիւններից շատ պարզ երևաց, որ Ռուսաստանի կողմից հայկական նահանգների գրաւումը միանգամայն անկարելի է եւրոպական խաղաղութեան տեսակէտից։ Բայց նոյնքան պարզ երևաց և այն, որ մի որևէ լուրջ առիթ Թիւրքիայի կողմից բաւական է, որ Թիւրքիան բաժանելու հարցը մէջտեղ գայ և լուծվի այն՝ ինչ գնով էլ ուզում է լինի։

Օսմանեան կառավարութիւնը այդ բանը մեղնից աւելի լաւ գիտէ, ուրեմն Թիւրքիան հէնց ինքը կը խուսափի այնպիսի դէպքերից, որոնք կը տանեն նրան դէպի կործանումն։ Քիւրդական սպառնալիքները սպառնալիք էլ կը մնան։

Այնու ամենայնիւ՝ քաղաքական նժարի մի փոքրիկ երերում բաւական է, որ մեր բոլոր ենթադրութիւններն ու յոյսերը ի դերև ելնեն և Թիւրքիայի հայը յայտնվի անակնկալների հանդէպ։ Օրինակ՝ Բասֆորի ափերի ամրացումը Ֆոն-Սանդերսի ծրագրով, որը ուղղված է Ռուսաստանի դէմ, կարող է պատերազմի պատճառ դառնալ։

Եւ ով կարող է գուշակել, թէ ինչ նոր բարդութիւններ կը ծագեն։

Այսպի

բեցին, քան պաշտօնական մարմինների հաղորդագրութիւնները և statistikան։

***

Վերջին առնամեակում մեր գիւղացիութիւնն in corpore հանդիպեց քաղաքական ու մտաւորական աւերիչ փոթորիկների։

Ցնտեսական երկարատև ագնանգը քայլեց, կազմալուծեց յարատևնչ գիւղը, քանդեց համայնքի գոյութեան հիմունքները, փաստօրէն առաջ բերեց հողի կենտրոնը, փաստաբերեց, իսկ միջավայնացում, պրոլետարիզացիա, իսկ միջավայրից անբաժան քաղցը ֆիզիքական տանջեց, հալումաշ արեց գիւղական մասայիին։

Բայց չը գտնվեց մեր պարբերական մամուլի մէջ մի օրգան, որ իր նախաձեռնութեամբ և անձնական բիսկով գնէ ուղարկէր ժողովրդի մէջ մի քանի ուսումնասիրող թղթակիցներ...

Այս անգամ էլ երկրի բուն իրականութիւնը պարզելու համար մամուլն անհամբեր սպասեց՝ մի օրեր խուլ վայրում, գիւղում կամ գաւառական քաղաքում մեխված «պատահական» թղթակցի նոյնքան պատահական փաստերին և լուսաբանութեան։

Այդ անցողական մեծ շրջանի տնտեսական սոսկալի աւերածութեան ամբողջ պատկերը հասարակութեան համար կը մնար չափազանց մութ, նոյնիսկ անծանօթ, եթէ ժամանակին երևան չը գային մեր հանգուցեալ նարօդնիկների՝ Ա. Քալանթարի և Ս. Զաւարեան մասնագիտական ուսումնասիրութիւնները։

Հէնց Դարաբաղի մահաբեր սովը և ընտեսական երկարատև ճգնաժամը մի գուցէ մնար հասարակութեան և անմիջական իշխանութեան համար անյայտ, անորոշ, եթէ չերևար հաղուագիւտ գործիչի անձամբ շրջված, դիտած, բազմաթիւ ճշգրիտ թուերով հարուստ, խելացի լուսաբանութիւններով և տրամաբանական եզրակացութիւններով առատ «Гозодъ» անուանված ուսումնասիրութիւնը։

Մինչդեռ այնտեղ, Ռուսաստանում, ժողովրդի արմատական հարցերի ուսումնասիրութեան գործում հրապարակ է գալիս հասարակական հիմնարկութիւնների և պրոֆեսիոնալ լրագրողների կոլեկտիվ աշխատանքը, այստեղ՝ կամ ենթարկված է պատահականութեան կամ ուսումնասիրվում է անձնազոհ գործիչների անձայրը եռանդի և ջանքերի շնորհիւ։ Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԸ ԱՐՄԱՒԻՐՈՒՄ

Լրագրական էջերում գրվեցին և գրվում են այն մասին, որ Աստրախանի թեմական դպրոցը պէտք է հաստատվի Արմաւիրում։ Մենք սրա կողմնակիցն ենք և ցանկանում ենք մեզ յայտնի տուեալներով ցոյց տալ, որ այլ կերպ լինել չէ կարող։

Որպէս հայ դպրոցի հիմնարկութեան նախօրեակին, այդ մտքի յղացման սկիզբներում էական և ամենաառաջին հարցը, որ պէտք է տայ ամեն մի ցանկացող, պէտք է լինի նրա ազգային-կուլտուրական բնոյթը, պահպանութեան միջոցները և ուսանող սերունդը թեական քանակը։

Այս երեք պահանջը ունեն ամեն մի տեղում հաստատվելիք կամ հաստատված դպրոցները։ Էական տարբերութիւնը կայանում է պահանջի չափի մէջ. ուստի երբ հարց է տրվում, թէ որտեղ հիմնել թեմ. դպրոցը, Արմաւիրում, Աստրախանում, թէ այլուր, մենք համեմատութեան մէջ պէտք է դնենք այդ վայրերը և նայենք նրանց վրա վերոյիշեալ երեք տեսակէտերով։

Կանգ առնենք առաջին տեսակէտի վրա։ Դպրոցը պէտք է ազգային-կուլտուրական բնոյթ, նպատակ ունենայ։ Ներսէս V-ը Ներսիսեան դպրոցը հիմնելիս այս դիտաւորութեամբ է առաջնորդվել։ Թիֆլիսի վրացախօս հայութեանը մոռացված հայ լեզուն սովորեցնելու, ազգային ինքնագիտակցութիւն առաջ բերելով՝ մայրենի լեզուն և հայութիւնը կենդանի և անկորուստ պահելու նպատակով էր, որ արտի Ներսէսը հիմք դրեց Ներսիսեան դպրոցին։ Այսօր Թիֆլիսի ուժեղ հայ ոգին և հայ մտաւորականութիւնը շատ բաներով պարտական են այդ հիմնարկութեանը։

Այն, ինչ որ 30-ական, 40-ական թուականներին կարելի էր մտորել Թիֆլիսի հայութեան ապագայի մասին, նոյն խորհրդածութիւնների մէջ է ընկնում մարդ և այժմ՝ նոր արդիւնաբերական մեծ կենտրոն Արմաւիրի մասին։

Արմաւիրի ընկ. ժողովրդի ներկայ սերունդը հայերէն չը գիտէ. բացառութիւնները մի երկու տասնեակից այն կողմը չեն անցնի. այն, պնդում ենք, որ հայախօսների թիւը այդ չափից այն կողմը չի անցնի, և ոչ ոք հակառակը չէ կարող պնդել ու հաստատել։

Եթէ դրութիւնը այսպէս շարունակվի, գուցէ մի քանի տարի յետոյ բնիկ հայախօս արմաւիրցի հազիւ թէ գտնէք։ Գոյութիւն ունեցող ծխական, երկդասեան-քաղաքային դպրոցների տիպի Ալեքսանդրեան, տղայոց և օրիորդաց գիմնազիաներում և ուսումնարաններում հայոց լեզուի դասաւանդութիւնը ոչ մի միիթարական բան չէ տալիս։ Մայրենի լեզուն կամ ազատվում է 5-ամեայ գրագիտութիւն սովորող ծխական ուսումնարանի սաների բերանում, կամ ծաղրի և արհամարհանքի ենթարկվում գիմնազիաները յաճախող երկսեռ աշակերտութեան և, ցաւով սրտի պէտք է ասեմ, շատ ծնողների մօտ (բացառութիւնները եզակի են)։ Արմաւիրի 7—800 հոգուց բաղկացած ուսանող սերունդը ոչ միայն չէ ուսանում մայրենի լեզուն, այլ մինչև իսկ արհամարհում է այն։ Գուցէ ընթերցողը կասէ, որ նրանց մայրենի լեզուն չիբքէվրէնն է. ճիշդ է այդ, բայց նրանք վաղուց խորշում են այդ խեցբեկական, անտաշ և անբարեհնչիւն, աւելի շուտ կոպտահնչիւն լեզուից. ամաչում են, որ այդ է նրանց մայրենի լեզուն. ուստի մանուկը սկսում է խօսել իր մօր չակերաւոր ռուսերէնով։ Այս բոլորի հետ միասին՝ Արմաւիրի հայը դեռևս պահպանել է իր մէջ հայկական հոգի, դեռ նա հպարտանում է, որ ինքը հայ է։ Ի հարկէ, բացառութիւններ կան։ Դեռ այս ամառ էր, որ Լազարեան ճեմարանի ուսուցիչ պ. Կոսլիկեանի նախաձեռնութեամբ և մասնակցութեամբ Արմաւիրի հասարակութիւնը որոշեց բանալ 8-դասարանեան վաճառականական ուսումնարան, ուր հայոց լեզուն պէտք է պարտադրեցուցիչ լինի։ Այս նպատակի համար յատկացվել է մօտ 45,000 ր., իսկ հոգեկան երկյարկանի հնարկայական շէնքը, ուր այժմ տեղաւորված են Ալեքսանդրեան ուսումնարանը և զանազան դասաստանական ատեաններ, արդէն վաղուց կայ և Արմաւիրի զարդերից մէկն է կազմում։

Բայց թէ այս դպրոցը և թէ միւս ծխական և այլ միջնակարգ տիպի դպրոցները ազգային-կուլտուրական ուղղութեամբ ոչ մի ծառայութիւն չեն կարող մատուցանել հայաշատ Արմաւիրին։

Սրա դարմանը թաղված է բացվելիք թեմական դպրոցի և նրա շուրջը հաւաքվելիք գիտակից և կրթված ինտելիգենցիայի ազդաշահ և ազգօգուտ գործունէութեան մէջ։ Եթէ կը լինի այս, կը սկսվի և գոյութիւն կը ստանայ, այն ժամանակ հայկական մի խոշոր հատուածի-Արմաւիրի հայութեան հայախօս ու հայակենցաղ գոյութիւնն էլ ընդ միշտ կապահովվի։ Այլ դէպքում ապագայ աւելի գիտակից հայ սերունդը անէծքով կը յիշէ յանցաւոր ժամանակակիցներին։

Վերոյիշեալ տեսակէտներով և պատճառներով՝ Արմաւիրը աւելի իրաւունք ունի իր մէջ ունենալ թեմական դպրոցը, քան Աստրախանը։ Եթէ այլ կերպ մտածողներ կան, նրանք իրանց մասին աւելի են մտածում, քան ազգի, և մի տեսակ անփոյթ անհեռատեսութեամբ զանց են առնում նրա էական շահերը։

Ինչ վերաբերում է պահպանութեան միջոցներին, պէտք է այս առիթով ևս խոստովանել, որ Արմաւիրը լիովի բաւարարում է և այս հարցը։ Այս տնտեսապէս անհամեմատ աւելի ապահովված վայրում ցարդ դրութեան տէրը և տնօրէնը եղել են տեղացիները. այստեղ հասարակութիւնը իր տրամադրութեան տակ հարիւր հազարների եկամուտի աղբիւրներ ունի և իր սեփական 23,000 դեսեատին բերրի և արգաւանդ դաշտերից կարող է մի 1000—1500 դեսեատին հող էլ յատկացնել ապագայ թեմական դպրոցին, ինչպէս այդ քանակի կրկնապատիկը յատկացրել է ծխական և Ալեքսանդրեան դպրոցներին։ Որ արմաւիրցու համար շատ աւելի հեշտ է միանգամ ընդմիշտ ապահովել բացվելիք դպրոցը, այդ մասին երկու կարծիք չէ կարող լինել, և ոչ մի քաղաք չէ կարող այդ կողմից մրցութեան դուրս գալ Արմաւիրի դէմ։ Որ Արմաւիրը իր սեփական հոյակապ շէնքերում կարող է հեշտութեամբ տեղաւորել ապագայ թեմականը, կամ ամենայն դիւրութեամբ կարող է ցանկացած դէպքում մի գեղեցիկ ու յարմարաւոր շէնք կառուցանել այդ նպատակի համար, այդ բոլորը կասկածից դուրս են։ Ուրեմն այս կողմից էլ գերակշռութիւնը Արմաւիրի կողմն է։

Ինչ վերաբերում է աշակերտութեան թըւին, որը կարող է մատակարարել Արմաւիրը ապագայ դպրոցին, այդ հարցը մինչև իսկ բարձրացնելու կարիք չը կայ, որովհետև ոչ ոք այլ կարծիքի լինել չէ կարող։ Արմաւիրի ընկ և եկեղ հայութիւնը այնքան աշակերտութիւն կը մատակարարէ, որ հազիւ թէ ապագայ դպրոցը իր պատերի մէջ տեղաւորել կարողանայ։ Որ Արմաւիրի թեմականցին հայերէն լաւ իմանալով հանդերձ շատ լաւ կիմանայ և ռուսերէն և, մշնակարգ կրթութիւն ստանալուց յետոյ, առանց մեծ դժուարութեան՝ կարող է հաստատութեան վկայական ձեռք բերել և հնարաւորութիւն ունենալ բարձրագոյն կրթութեան սանմանները թեակոխել։ ապագայում էլ աւելի օգտակար անդամ լինելու համար հասարակութեան մէջ, այդ էլ հիշդ է և անհերքելի։ Ուրեմն այս ուղղութեամբ էլ Արմաւիրի թեմականը աշակերտների մեծ թիւ կը գրաւէ դէպի իրան։ Իսկ եթէ թեմականը նման լինի Ն.-Նախիջևանի թեմականի տիպին, աւելի գրաւիչ կը լինի և աւելի դիւրութիւններ կընձեռնէ իրան ապաւինած հարիւրաւոր աշակերտութեանը ապագայում առաջադիմելու բարձրագոյն կրթական ասպարէզներում։

Այսպէս ուրեմն, մեր կարծած երեք տեսակէտներով էլ, Արմաւիրը իրաւունք ունի իր ծոցում հիմնելու ապագայ դպրոցը, որից մեծապէս կօգտվի ընկ և եկեղ հայութիւնը և կուլ չի դնայ ժամանակակից աննպաստ և այնքան ցաւալի պայմանները շնորհիւ։ Հ. Ար.

Ղզլար

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿ. ՅՕԲԵԼԵԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

—

Կիրակի, ապրիլի 20-ին, ցերեկվայ ժամը 3-ին, Արտիստական Ընկ. դահլիճում կը կայանայ Կովկասեան Բժշկական Ընկ. յօբելեանական հանդէսը հետեւեալ ծրագրով.

1) Մաղթանք և հոգեհանդիստ Ընկ. մեռած անդամների յիշատակին։

2) Ժողովրդական հիմն։

3) Ընկ. նախագահ Մ. Վ. Լունկեվիչի ողջոյնի ճառը։

4) Հաւառօտ հաշիւ Ընկ. գործունէութեան՝ 50-ամեայ գոյութեան ընթացքում, կը կարդայ Ընկ. քարտուղար Ա. Ա. Մուխարինսկի։

5) Պ. նախագահի յայտարարութիւնը այն անձանց մասին, թէ Ընկ. գոյութեան ընթացքում ովքեր են ընտրվել Ընկ. պատուաւոր անդամներ։

6) Յօբելեանի առիթով ստացված ուղերձների, հեռագիրների և նամակների ընթերցում։

7) Ճառեր։

ա) Բժշկ Ն. Ն. Վեսելովզորով. «Վիրաբուժութեան առաջադիմութիւնը վերջին 50-ամեակում»։

բ) Գ. Ս. Փոնդոեվ. «Մարմական հոգեկան հիւանդութիւններ»։

8) Նախագահի վերջին խօսքը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Վաղը, երեկոյեան ժամը 8-ին, փոխարքայի պալատում նշանակված է մրցելից վերաբերեալ կոմիտեի կովկասեան ճիւղի անդամների ընդհանուր ժողովը կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովայի նախագահութեամբ։

◆ Կովկասի Հայոց հոգեւոր Բար. Ընկ. վարչութիւնը որոշել է մասնակցել Իս. Յարութիւնեանի 25-ամեայ մանկավարժական և 30-ամեայ գրական գործունէութեան յօբելեանին։ Ներկայացուցիչներ են ընտրված, ա. տ. Հայկանուշ Մարտիրոսեան և Շուշանիկ Օհանէսեան։

◆ Ռազմավիրական ճանապարհի վրա սաստիկ բուք է այժմ։ Զիւնը ծածկել է ճանապարհը։ Վլադիկավկազ մեկնած աւտոմոբիլները կէս ճանապարհից վերադարձան Թիֆլիս։

◆ Թոյլատրված է Թիֆլիսում մալիսրիայի վերաբերեալ համառուսական մի հանդիսաւոր կազմակերպել 1916 թ-ին։

◆ Այսօր, ապրիլի 19-ին, բժ. Կարապետեանի այգում կը կայանայ զբօսանք յօգուտ ս. Սարգիս եկեղեցու ծխական դպրոցի։

◆ Այսօրվանից Անդրկովկասեան երկաթուղային գնացքների երթևեկութեան համար ամարային նոր կարգ է սահմանված։

◆ Թռչնասէրների կովկասեան ընկ. կազմած ցուցահանդէսը, մուտքի տոմսակների վաճառումից և էքսպօնատների տեղերի վարձից, ունեցել է մօտ 700 ռուբ. ընդհանուր մուտք. իսկ ցուցահանդէսի վրա ծախսել է 500 ռուբլի։

◆ Մինչև այժմ հեծանիւների համար 1908 թ-ին հրատարակված պարտադիր որոշումներով չէր թոյլատրվում հեծանիւով շրջել Դվորցովայա փողոցով, Երևանեան հրապարակով, Արժանսկի բազարով, Մէյդանով, Սօլդատսկի բազարով, Վորոնցովի հրապարակով, Մէրքայելեան պրոսպեկտով և Փետրվարի 19-ի փողոցով։ Այժմ տեսնելով որ այդ սահմանափակումը՝ հեծանիւների նկատմամբ, թոյլ չէ տալիս հեծանիւներով օգտվելու և այդ սպորտը զարգացնելու, որի հետանքով էլ հեծանիւներից վերցվելիք քաղաքային տուրքը ընկել է,— նահանգապետը մտադրութիւն ունենալով փոխել վերոյիշեալ որոշումները, մի գրութեամբ առաջարկել է քաղ. վարչութեան՝ պարտադիր որոշումների նոր ծրագիր կազմել։ Քաղ. վարչութիւնը կազմել է այն՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Կիէվում և այլ քաղաքներում գոյութիւն ունեցող որոշումների համաձայն։

◆ Որովհետև նոր սպանդանոցում մորթվող անասունների իւրաքանչիւր գլխի համար վերցվում է այժմ 1 ր. 20 կ. փոխանակ 80 կ., որ վերցվում էր առաջ, այդ պատճառով քաղ. դումայի տնտեսական յանձնաժողովը արդարացի գտաւ տաւարի մսի սակագինը բարձրացնել 1 կոպէկով, փոխանակ 15-ի դարձնել 16 կ.։

◆ Հանգուցեալ քաղաքագլուխ իշխ. Վ. Ն. Զերքեզովի անունով քաղաքիս միջնակարգ դպրոցներում հաստատվում են երկու թոշակ, մամուլի գործիչների որդիների համար։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն թոյլ է տուել աշակերտաւորներին խմբերին նուագել հրապարակներում սպիտակ ծաղկի օրը։

◆ Այսօր Հասարակական ակումբում տաւորական երեկոյթ էլ լինելու։ Ներկայ սեզոնի վերջին զրոյցը տեղի կունենայ ապրիլի 21-ին, երկուշաբթի օրը։ Իսկ վերջին երեկոյթը (օպերային ներկայացում) նշանակված է առաջիկայ շաբթին, ապրիլի 26-ին։

◆ Մեզ հաղորդում են, որ շուտով լոյս կը տեսնի ֆրանսիացի հեղինակ V. Bouillot-ի «La coopération de la famille et de l'école» աշխատասիրութեան ռուսերէն թարգմանութիւնը։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչը թոյլատրել է քաղաքային վարչութեան մէջ մարկանները, բացիկներ և փաթեթներ ծախել։

◆ Զրի և էժանագին ճաշարանների վարչութեան կապիտալիզացիոն զբօսանքը, որ նշանակված էր ապրիլի 20-ին, յետաձգվում է մայիսի 4-ին։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Եալտայում, քաղաքային սանիտարային բժիշկ Բելեակովի տանը այս օրերս կատարվեց մի ցնցող ողբերգութիւն։ Երբ Բելեակովի կինը գնում է շուկայ, Բելեակովը դանակով կտրում է իր քնած աղջկայ շնչերակը և մի խոր հառուած հացնում իր ականջի ետևը։ Տիկին Բելեակովան, երբ վերադառնում է շուկայից, մօրդին ու աղջկան գտնում է արիւնաքամ եղած, կենդանութեան թոյլ նշաններով։ Շուտով Բելեակովը և աղջիկը մեռնում են։ Դէպքը քաղաքում ցնցող տպաւորութիւն է արել։ Բելեակովը 20 տարի շարունակ կնոջ հետ ապրել է խաղաղ և միայն այս վերջին ժամանակները նրանց միջև յաճախ տեղի էին ունենում սուր վէճեր, որոնք վերջացան այս ողբերգութեամբ։

◆ Զանգեզուրի գաւառի հաշտարար միջնորդ Սոկոլով 500 ռուբլու կաշառակերութեան համար դատապարտված է կալանաւորվան՝ մի տարով։ Նոյն գաւառի պրիստաւ Բեղնակով երկու երեխայի ծեծելու համար, դատական պալատի վճռով դատապարտվեց բանտարգելութեան՝ չորս օրով։

◆ Գանձակից հաղորդում են, որ աւազակ Նաղիի և սրա աւազակախմբի հետապնդումը շարունակվում է։

◆ Երևանում, ապրիլի 17-ին, քաղաքի մօտերքը դրամաշորթների ձեռքով սպանվեց վաճառական Մնացականեանը։ Դրամաշորթները տարել են նրա մօտ գտնված 1000 ռուբլին։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան նախաձեռնութեամբ այս ապրիլի 15-ին Պետերբուրգում գումարվեց մի համագումար՝ քննելու զէմստվոներին ու գիւղատնտեսական ընկերութիւններին նպաստելու և հոգատար ազգաբնակութեանը անմիջական օգնութիւն հասցնելիս զէմստվոյին ու կառավարական ապրովիսական կազմակերպութիւնների փոխադարձ յարաբերութիւնների հարցերը։ Համագումարին հրաւիրված են հողային բարեկարգութեան գործերի կոմիտէի բոլոնական լիազօրները, գիւղատնտեսութեան բոլոր տեսուչները, Սիբիրի բոլոր նահանգական ագրոնոմները, Եւրոպական Ռուսաստանի 47 նահանգների հոգատար ազգաբնակութեան օգնութիւնը զեկավարողները և կենտրոնական վարչութիւնների ներկայացուցիչները։ Համագումարին այդպիսով մասնակցում են ընդամենը մօտ 100 հոգի։ Ներկայումս հոգատար ազգաբնակութեանը անմիջական ագրոնոմական օգնութիւն ցոյց տալու համար կառավարութիւնը ծախսում է մօտաւորապէս 10 միլիոն ռուբլի, և կասկած չը կայ, որ այդ գումարը տարէ-ցտարի աճելու է։ Որովհետև ագրոնոմական գումարայատկացման կէսից աւելին չէ ծախսվում անմիջապէս կառավարութեան ձեռքով, այլ տրվում է զէմստվոներին, ուստի շատ կարևոր նշանակութիւն ստանում են այն պայմանները, որոնց կատարմամբ բոլոր առհասարակ հասարակական կազմակերպութիւնները կարող են յոյս դնել կառավարութիւնից մշտապէս նպաստ ստանալու վրա։ Հէնց այդ պայմանները որոշելու վրա, վերջին ժամանակի փորձառութեան հիման վրա, իր ուշադրութիւնն է դարձնելու համագումարը։

◆ Վարշավայում, Լօձում, Մոսկվայում, Պետերբուրգում, ինչպէս նաև ուրիշ քաղաքներում ընդարձակ խուզարկութիւն և ձերբակալութիւն է կատարվում բանւորական շրջաններում մայիսի 1-ի առիթով։

◆ Պետ. Դումայի անդամները, նոյնիսկ աջակողմեանները, վրդովված են պրեմիէր Գորեմիկինի որոշումից, որի համաձայն դատի է յանձնվելու Զիսէիձէն, որի արտասանած ճառում ոչ մի յանցանք չեն տեսնում։

◆ Պետերբուրգի քաղաքապետի կարգադրութեամբ քննութիւն է կատարվում մայրաքաղաքի պրոֆէսիոնալ միութիւնների մէջ։

◆ Մոսկվայի հայկական կոմիտէը յանձնարարել է Տօտոմեանին մշակել հայկական բանկի նախագիծ ժողովրդական բանկի տիպի—թիւրքահայերի համար մանր վարկային բանկ բանալու։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժշկութիւն մեղրամոմով.— Վերջերս բժշկական գիտութեան մէջ մինոր ճիւղ է երևացել, որը կոչվում է կերօտերապիա կամ բժշկութիւն մեղրամոմով։ Բրաժիլկ Զանդիօրա անցած շաբթում Պարիզի Զանդիօրա ակադեմիային ներկայացրել է բժշկական ակադեմիային ներկայացրել է մի զեկուցագիր՝ մեղրամոմով բժշկութիւն կատարելու մասին, որպիսի միջոցը նա գործադրում է 1901 թուից սկսած։ Վերքերը, պալարները և այրուածքները բժ. Զանդիօրան լցնում է 80 աստիճան ջերմութիւն ունեցող սակ մեղրամոմով, և մեղրամոմի այդ կոմպրեսը վերքի վրա թողնում է ամբողջ 24 ժամ։ Այդ ժամանակամիջոցում կոմպրեսի ջերմութիւնը 43 աստիճանից ցած չի իջնում։

Չը նայած սկզբնական բարձրաստիճան ջերմութեան, ցաւ չի զգացվում։ Մեղրամոմը վերքը ապահովում է օդից և ամբացնելով կամ պնդացնելով, սեղմում է այն։

1909 թուին Զանդիօրաը փորձեց մեղրամոմը փոխարինել պարաֆինով (սպիտակ և խրտոտ նիւթ, որով մոմեր են պատրաստում), և հետևանքը ստացվեց նոյնը։

Նա մինչև անգամ փորձ է արել վանիա ընդունել՝ տակ պարաֆինով՝ 50 աստիճան ջերմութիւն ունեցող, և խորհուրդ է տալիս ընդունել այդ միջոցը՝ որպէս բուժիչ միջոց օրգանիզմի համար այն դէպքերում, երբ կարիք է զգացվում առատ քրտինք առաջ բերելու։

Արհեստական քթեր.—Բերլինում կայացած վիրաբոյժների համագումարում ընդհանուրի ուշադրութիւնը դարձրեց իր վրա պրոֆ. Կենիգի (Մարբուրգից եկած) զեկուցումը արհեստական քթերի մասին։ Ջեղած կամ ընկած քթերի տեղ կարելի է սահմանել նորը, կողերի կամ կրծքի ոսկորների մասերից և մարմնի որևէ մասից և մորթից շինած։ Պրոֆեսոր Կենիգի զեկուցումը ընդհանուր վիճաբանութիւններ առաջացրեց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 18 ապրիլի

«Մշակի» 79-րդ համարում պ. Շերվանզադէն մի անվայել յօդուած է տպել իմ հասցէին, որովհետև ես համարձակվել եմ Գրական Ընկերութեան մէջ, բոլորովին օբեկտիվ կերպով, քննադատել նրա «Պատուի համար» պիէսը։ Ինքը պ. Շերվանզադէն, ի հարկէ, իրաւունք ունի քննադատելու և ոչինչ համարելու նոյնիսկ մի «Ֆաուստ»։

Դժբաղդաբար մեր վիպասանը իր յօդուածի մէջ բոլորովին մի կողմ թողնելով բուն խնդիրը՝ անձնական ՀՀՀ և խեղաթիւրված հաշիւների է վերածում ամեն ինչ։ Նա գրում է, որ իբր թէ ես Պարիզում ինքնգլուխ ծանօթացել եմ նրա հետ փողոցում. որ իբր թէ իսկոյն հայոց գրականութեան մասին միմեանց հետ խօսելուց յետոյ, նա ինձանից երես է շուռ տուել, հեռացել, որովհետև ես պաշտպանել եմ մեր բոլոր հեղինակներին, իսկ իրան բացառութիւն համարելով՝ գովել։ որ իբր թէ, հակառակ այդ բոլորին, ես մի օր գնացել եմ նրա բնակարանը և նստել սեղանատակը։

Արդէն ընթերցողները նկատում են, թէ ի՜նչ անկապ ու լեգենդային բնաւորութիւն ունեն այս բոլորը։ Եղելութիւնը հետևեալն է. մեզ իրար հետ ծանօթացրել է նկարիչ Յովհաննէս Ալիսգանը և այն էլ հայոց երեկոյթում, բոլորովին պատահաբար։ Երբ, երեկոյթում վերջանալու մօտ, ես դուրս էի գալիս, այդ միևնոյն պարոնն ինձ խնդրեց, որ ես ուղեկցեմ պ. Շերվանզադէին մինչև Լատին թաղը, որովհետև պ. Շերվանզադէն դեռ անծանօթ էր քաղաքին, մանաւանդ որ ուշ գիշեր էր։ Մենք երկուսով նստեցինք Մետրոպոլիտէն կոչված տրամվայը և լեքտրաքարշը. ճանապարհին խօսում էինք, մինչև անգամ, յիշում եմ, վիճեցինք, բայց ոչ հայոց գրականութեան մասին, այլ ֆրանսիական ժամանակակից հեղինակների և յատկապէս Պոլ Բուրժէի մասին։ Հենց որ հասանք Լատին թաղը, բաժանվեցինք իրարից։ Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, թէ իբր ես նրա տունն եմ գնացել և նոյնիսկ սեղանատակը նստել, բացարձակապէս չեղած բան է. ես կիանքումս երբէք և ոչ մի առիթով պ. Շերվանզադէի տանը չեմ եղել. ես չեմ էլ իմացել, թէ նա որտեղ է ապրում. և ինչ կարիք ունէի նրա տանը լինելու. մեր ծանօթութիւնը հենց վերոյշէալ երեկոյթան սկսվեց և վերջացաւ. այնուհետև մենք ոչ մի տեղ ոչ խօսել ենք իրար հետ, ոչ էլ տեսնվել։

Մ. Մատէոսեան

—

Թիֆլիս, 18 ապրիլի

Ինձ քննադատել են, քննադատում են և դեռ շատ պիտի քննադատեն, և ես երբէք ոչ մի իմ քննադատի հետ, եթէ նա անձնական թշնամութեամբ չէ զեկավարվել, բանակիւռ չեմ մղել։ Այդպէս եմ վարվել Սիմէօն Յակոբեանի, Արսէն Տէրտէրեանի, Սա. Լիսիցեանի, Մ. Բերբերեանի, Գ. Եսգիրարեանի և այլն և այլն քննադատների վերաբերմամբ, որոնք անձնականով չեն զեկավարվել, այլ իմ երկերին մօտեցել են օբեկտիվ և իրանց զգացածի չափ բարեխիղճ։

Բայց երբ հրապարակ են եկել անձինք, որոնք այլ և այլ կողմակի միտումներով ամեն կերպ աշխատել են սուտ ասելով և իմ գրածները ուղղակի աղաւաղելով ստոյգացնել նրան, ես անհրաժեշտ եմ համարել իսկոյն և եթէ ստախօսի դիմակը պատռել և ցոյց տալ նրա իսկական դէմքը իր առաջին տարիներին։ Եւ այս ես արել եմ և անում եմ սոսկ յանուն գրական և հասարակական շահերի, յօգուտ այն ունկնդիրների և ընթերցողների, որոնք ամեն մի ապած կամ արտասանած խօսք հաված իւղի տեղն են ընդունում։

Երբ ես «Մշակի» նախանցեալ օրվայ համարում ասացի, որ պ. Մատէոսեանին ես Պարիզում իր ամբարտաւանութեան և յանդգնութեան համար հեռացրել եմ ինձանից, ասացի, որպէս զի նրա ունկնդիրները, որ մեծ մասամբ նրա աշակերտներն են, գիտենան, թէ ինչ տեսակ մարդ է իրանց ուսուցիչը, զեկավարը և դասախօսը և որպիսի վատ զգացումով է զեկավարվում սրա ու նրա երկերին մերձենալիս։

Այժմ պ. Մատէոսեանը տեղական մի լրագրի պաշտպանութեամբ և «Մշակի» այսօրվայ համարում տպվող իր նամակով աշխատում է իմ առաջ բերած փաստը, որ ծայրէ ի ծայր ճըշմարտութիւն է, հերքել։ Նա ասում է, թէ ինք Պարիզում չէ յարձակվել հայ հեղինակների վրա, չէ խրոխտացել կործանել «կուռքերը», թէ ես նրան չեմ ասել «կորիր աչքից», թէ նա յետոյ իմ տունը չէ եկել և թէ իբր իմ ընակարանի տեղն էլ չէ իմացել։ Իսկ ես կրկնում եմ, որ ինչ որ ասել եմ, զուտ ճշմարտութիւն է, որ մենք վիճել ենք բացի Պոլ Բուրժէից և հայ հեղինակների մասին, որ ես, տեսնելով նրա ծայրայեղ ամբարտաւանութիւնը, դուռացել եմ «կորիր աչքիցս», որ նա սարսափած փախել է, որ նա յետոյ յանդգնել է գալ իմ տունը։

Մ. Մատէոսեանը օգտվում է այն բանից, որ մենք վիճել ենք կէս գիշերին, առանց վկաների։ Բայց այդ նրան, ի հարկէ, չի փրկի, որովհետև ով ինձ ճանաչում է, նա շատ լաւ գիտէ, որ սուտ ասելն իմ բնաւորութեանն այնքան է խորթ, որքան պ. Մատէոսեանը հաւատարիմ է իր սեմենարիական ամբարտաւանութեանը։

Մ. Մատէոսեանը այնքան համարձակ է բացարձակ ճշմարտութիւնը հերքելու, որ ասում է, թէ մինչև անգամ իմ ընակարանի տեղն էլ չը գիտէր Պարիզում։ Մի մարդ, որ ինձ ուղեկցել է մինչև իմ ընակած տան դռները և այնտեղից արդէն վանտվել, մի մարդ, որ յաճախ միևնոյն տանը կեցող մի ռուսահայ ընտանիք է այցելել, չէր կարող չիմանալ իմ կացարանը։

Սակայն, բայց չարին իմացէք։

Գալով այն լրագրի, որի անունը «Մըշակը» չի ուզում յիշել, ինձ տուած քաղաքական դասին, կասեմ միայն. Чья корова бы не мычала, ваша бы молчала.

Ի վերջոյ մի խօսք ևս։ Մ. Մատէոսեանները կարող են, որքան կամենան, աշխատել վարկաբեկ անելու ինձ իբրև հեղինակի, աղաւաղել իմ երկերը, ստախօսել, ստեղծելով դիրքեր, դրութիւններ, որ չը կան նրանց մէջ. դա ինձ բնաւ չի վշտացնում։ Ինձ վշտացնում է միայն և միայն սուտն ու ստախօսութիւնը մարդկանց։ Եթէ իմ երկերն արժէք ունեն, իրանք իրանց կը պաշտպանեն. և «Պատուի համարը» վառուռուրպէս պաշտպանեց իրան պ. Մատէոսեանի ոանձգութեան դէմ հէնց իմ հակառակորդների շրջանում պատող պ. Արշակ Դաղբեանի բերանով, որ այնպէս փաստորէն ջրեց պ. Մատէոսեանի բոլոր ասածները, ցոյց տուեց նրա ծայրայեղ անբարեխղճութիւնը, եղծումներն և ամբողջ նրա դասախօսութիւնը ոչնչացրեց...

Շերվանզադէ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՂՁԱՒԱՆՋ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԲՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՑ

(Քաղաքական իդիոտիզմի ուսերդ վաւերացումներ)

Հայկական «համուսի» բոմանտիկ խընկարկումները չը կարողացան առանց զայրոյթի մարսել, երբ անվերապահօրէն խոստովանվեց հրապարակով՝ հայ հասարակական ինտելիգենցիայի այլանդակ բացասականութիւնը։

Ի՞նչ պիտի առարկեն մեզ, եթէ հաված վարքագրութեան աւելացնենք, որ քաղաքական իդիոտիզմը կազմել է միշտ հայ մտաւորականութեան քարկոծների սիրասիրող գծերից մէկը։

Այնտեղ, սահմանից միւս կողմը, ուր հայ տարրը ամենամեծ առիթներն է ունեցել քաղաքականօրէն մտածելու և արտայայտվելու՝ իր վատթարագոյն վիճակի բարեփոխութեան համար, ամենաարտառոց չափերով նկատվել են նաև քաղաքական իդիոտիզմի փաստերը։

Կարծես հայ քաղաքական գործիչների համար պատմութիւն չէ գրվում. կարծես հայ կուսակցութիւնները ոչինչ չը սովորեցին և ոչինչ չը մոռացան հէնց իրանց գլխից անցած դառն փորձութիւնների հարուստ տարեգրութեան ցայտուն էջերից։

Հայկական ազատագրութեան պատմութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ կարճատեւ իլիւզիաների եւ երկարատեւ յուսախաբութիւնների մի ծիգ շղթայ, որի իւրաքանչիւր օղակը մատնում է ձեզ հայ գործիչների ամենախոշոր բացասականը։

Հայկական հարցի վերջին էտապը, որի մասին յաճախ առիթ ենք ունեցել սոյն էջերում խօսելու, եկաւ ու այնքան խստացրեց մեր գործիչների քաղաքական իդիոտիզմը, որ, դիալեկտիկայի օրէնքով փոխեց նրա ուրակը և դարձրեց քաղաքական յանցագործութիւն։ Թէ ինչ դիրք բռնեցին հայ յեղափոխականները թիւրքական «սահմանադրութիւնից» ի վեր, մանաւանդ բալկանեան պատերազմի ամբողջ ընթացքում և այնուհետև. թէ ինչ արեցին նրանք (բացասական ուղղութեամբ) և ինչ չարեցին (դրական ուղղութեամբ), այդ բոլորի մասին բազմաթիւ յօդուածներով արտայայտվեցինք մենք «Մշակի» անցեալ տարվայ համարներում։

Այժմ հանդիսատես ենք նոր խեղճատեսութեան։

Թիւրքահայութեան բաղդի ներկայացուցիչները գլուխ են կոտրում անգամ այժմ օսմանեան «պարլամենտում» տեղը գրաւելու հարցի վրա։

Հայկական մղձաւանջ Փոքր-Ասիայում, մեբուսական ընտրութիւնների նախապատրաստութիւններ Կ. Պոլսում։

Թիւրքահայ կեանքի ու գոյքի անապահովութեան սպառնալիքների նոր ուրուականներ Անատոլիայի լեռներում, ամսական 50 ոսկով տաք տեղեր բռնելու մտահոգվեցեր Բոսֆորի ափերում։

Մի տեղ արհամարհված ու ոտնահարված հայկական հարց, լոկ թղթի վրա գոյութիւն ունեցող բեֆորմների նախագիծ, միւս տեղ պարլամենտական ձայներ վաստակելու առնուռ՝ հայկական հարցը նահատակել տենչացող կառավարութեան հետ։

Սրանք աւելորդ վաւերացումներ են՝ հայ գործիչների քաղաքական իդիոտիզմը անթերի փաստերով ապացուցելու համար։ Սա, վերջապէս, հայ յեղափոխական գործունէութիւն չէ նշանակում, այլ հայ յեղափոխական ոճրագործութիւն։

Մեբուսներ ընտրելու ներկայ եռանդը ոչինչով չէ տարբերվում թիւրքական «սահմանադրութեան» առաջին շրջանի ընտրութիւններից, երբ հայ գործիչները երազական յոյսեր էին տածում՝ երիտասարդ-թիւրքերի պարլամենտի միջոցով իրանց քաղաքական իդեալը, էջթ նուազագոյն չափով, իրականացնելու համար։

Բայց ում համար էր և ով մաշեց 1909—1913 թուականների պատմութիւնը։ Մեթէ անհամոզեցուցիչ էին փորձերն ու դասերը, որ թիւրքական պարլամենտ կոչվածը այլ բան չէ, բայց եթէ թիւրք-երիտասարդական օլիգարխիայի դեսպոտական կամքի հաւաքական արտայայտիչը, այլ ոչ երբէք քաղաքացիական իրաւահաւասարութեան սկզբունքներով կեանքի կոչված մի ժողովրդական ներկայացուցչութիւն, ուր զէթ պալիատիվ նշանակութիւն ունենար մանր ժողովուրդների պատգամաւորութիւնը, հետևապէս և պատգամաւորների քանակի հարցը։ Ներկայ պայմաններում թիւրքական պարլամենտում տեղեր գրաւելը չունի ոչ մի փաստական ու ձևական նշանակութիւն, ուր մնաց այդ տեղերի քանակի ինդիրը։ Վերջապէս՝ եթէ լիբերալ տարրերը, ըստ իրանց քաղաքական ըմբռնումների, արժէքներ են որոնում այդ հողի վրա, ինչպէս հաշվել յեղափոխութեան գաղափարը ճակատին դրոշմված կուսակցութիւնների ընտրական պայքարի անօրինակ եռանդի հետ։

Ո՞ր մանր ազգի ազատագրութեան պատմութիւնից է սովորել Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ մի ժողովրդի ստրկական վիճակի բարեփոխութեան իդէալին նուիրված ազատագիր բանակը տեղեր է որոնում այն լիգալ հաստատութեան մէջ, որը իրապէս ասասյախաբ մի գործիք է կառավարութեան ձեռքին և ուր պիտի լուցվի միայն նրա թոյլ ձայնը, արհամարհվի նրա անզօր բողոքը։ Ի՞նչ երկիր ու ժողովուրդ կարող է նա ցոյց տալ ազգերի ազատագրական շարժումների տարեգրութեան մէջ, ուր մի յեղափոխական կուսակցութիւն այնպիսի անզգայութեամբ բռնաբարէր յեղափոխական մտքի ու գործի իդէան, այնպիսի խորշանքով երես դարձնէր կարմիր դրօշակից, ինչպէս վարվից նա սուլթանների հայրենիքում՝ հայկական նահատակ հարցի վերջին էտապում։

Երէկ մահմեդականն, ալանական ազգային շարժում, այսօր քիւրդական շարժում։

Երէկ հայկական կոտորած, այսօր հայկական համատարած մղձաւանջ։

Մահմեդականները, ալանները և քիւրդերը սրով ու հրով երկիւղ էին ազդում Բ. Դրանը և անհանգստացնում եւրոպական կաբինէտները. նշանակում է՝ կարմահմեդական, ալանական եւ կայ քիւրդական վտանգ։

Հայ երեխէները, ընդհակառակը, բաղխում էին միայն կաբինէտների դռները՝ ազերատարերը ձեռքներին, իսկ հայ պատանեաց խիկարները ազգային մեբուսներ ընտրելու քաղաքական մտահոգութեամբ են զբաղված. նշանակում է՝ չի եղել եւ չը կայ այսպէս անուանված «հայկական վտանգ»։

Հէնց դրա մէջ էլ կայանում է հայկական հարցի ամբողջ պատմական ողբերգութիւնը։

Նա չէ եղել ազգային կազմակերպված շարժման, ազատագրական կռւի հարց, այլ մասսայական կոտորածների և աղեխարշ հեծեծանքների հարց։ Իսկ այդպիսի մի հարցի չէ ուզում եւրոպական կօնցերտը քաղաքական ընոյթ տալ։ Հասկացէք վերջապէս։

Բայց ինչ փոյթ հայ «յեղափոխական» կուսակցութեան համար։ Նա բորբոնել է արդէն թիւրքական լեգալիզմի ճահճում և հայ ազատագրութեան դատը վաճառել հայ մեբուսական իրաւունքներով։

Կրկնում ենք՝ քաղաքական իդիոտիզմի աւելորդ վաւերացումներն են սրանք։

B. Intimus

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մեբսին, 2 ապրիլ

◆ Զատկի երկրորդ կիրակին Սիսի մայրավանքին մէջ ս. միւռոնի օրհնութիւն պիտի կատարուի։ Այս հանդէսը, որ պիտի կատարուէր անցեալ տարիները, բակոնեան պատերազմներուն հետևանքով յետաձգուեցաւ։

Այս առթիւ, Զատկի առաջին շաբթուն պիտի կատարուի նաև եպիսկոպոսական ձեռնադրութիւն յանձին Հալէպի առաջնորդ Պետրոս ծ. վ. Սարաճեանի և կաթողիկոսական դիւանապետ Գիւտ ծ. վարդապետի։

◆ Ադանայի առաջնորդ ընտրուեցաւ Բոդոստոյի նախորդ առաջնորդ Գէորգ ծ. վ. Սալանեան։

Սալանեան ծ. վարդապետը, որ լաւ, գործունեայ և հայրենասէր մարդու մը համբաւ կը վայելէ, ահագին և կարևոր գործեր ունի կատարելիք Ադանայի մէջ։ Ամբողջ թեմը ցնցումի և վերանորոգութեան պէտք ունի, և պարտաճանաչ գործիչի մը առաջ գործունէութեան ընդարձակ դաշտ մը կայ։

Սպասելով իր ժամանումին, մենք բարի գալուստ կը մաղթենք իրեն և օգտաշատ գործունէութիւն մը։

Դիտող

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Գերմանական զեկավար շրջանները և մամուլը դժգոհութիւն են յայտնում ամերիկական դիպլոմատիայի գործողութիւններից։ Պաշտօնական օրգանները յայտնում են, որ պրէզիդէնտ Վիլսօնը, վճռելով պատերազմական գործողութիւններ ընդդէմ Մէքսիկայի, իր վրա առաջին պատասխանատուութիւն վերցրեց։

◆ Բոլգարական կառավարութիւնը սկսել է դպրոցներ բանալ ալբանական գիւղերում։

◆ Թէհրանի ռուսաց միսսիան առաջարկեց պարսից կառավարութեանը վերացնել Թիւրքմէնչայի դաշնադրութեան հինգերորդ յօդուածը, որ նեղիչ ու ստորացուցիչ սահմանափակումներ է դնում օտարազգիների առաջ Պարսկաստանում անշարժ կայքեր ձեռք բերելու վերաբերութեամբ։ Միսսիայի առաջարկութիւնը մերժվեց։

◆ Բերլինում տեղի են ունենում կարևոր խորհրդակցութիւններ զեկավար շրջաններում այն հարցի առիթով, թէ ինչպիսի դիրք է բռնելու Գերմանիան այն դէպքում, եթէ Ֆրանց-Յոսէփի կայսրի մահից յետոյ ներկայ գահաժառանգ Ֆրանց-Ֆէրդինանդը, գահ բարձրանալով, ապրեսիվ քաղաքականութիւն սկսէ երբեակ համաձայնութեան դէմ։

◆ Պարիզից հեռագրում են, որ, լուրերի համաձայն, պարսից նախկին շահ Մահմէդ-Ալին թէհրան է ուղարկել լիազօրների՝ բանակցելու Պարսկաստան վերադառնալու թոյլտուութեան մասին։ Նա պատճառաբանում է իր ակարութեամբ, որը սպառնում է նրան մահով և նրան վտանգաւոր չէ դարձնում երկրի հանգստութեան համար։

◆ Բուդապէշից հեռագրում են, որ անկախների կուսակցութեան լիդէրների Պետերբուրգ գալը վիժեց։

◆ Շահագրգռված մեծ պետութիւնները բողոքում են Չինաստանի դէմ, որ նաւթային կօնցեսիաները տուել է ամերիկեան «Standart»-ին։

◆ Վիէննայում վախճանվել է գիտութեանց ճեմարանի նախագահ, յայտնի երկրաբան հրէայ Զիւսը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 4711. **ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՕՆԸ**

Դորձ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։

Միակ գործարանատէրը

Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցերինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապօնը» կանոնաւոր գործադրողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշւով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ ամտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պետութիւնում. յայտարար. «№ 4711» մարկայով։

(M. 544862) 16—15

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտովսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մանանգէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրոթերապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տելեֆոն № 388.
(ա. օ.) 112. 100—48

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, ապրիլի 20-ին, ցերեկվայ ժամը 11½-ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում կայանալու է ծիսական տարեկան ընդհանուր ժողով։
Զբաղմունքի առարկաներն են
1) 1912—13 թ. թ. տարեկան հաշիւների քննութիւն։
2) 1913—14 թ. թ. նախահաշիւների քննութիւն։
3) Հոգաբարձութեան 4 անդամի և երեցփոխի ժամանակը լրանալու առիթով ամբողջ կազմի նոր ընտրութիւն։
Քամոյեան ս Գէորգ եկեղեցու Հոգաբարձութիւն

Ծանօթութիւն.—Աչքի առաջ ունենալով, որ մի շարք նշանակված ժողովներ չը կայացան ծխականների օրինաւոր թիւ ներկայ չը լինելու պատճառով և մինչև օրս 1912 թ. հաշիւը և 1913 թ. նախահաշիւը մնացել են առանց քննութեան, ուստի հոգաբարձութիւնս յատկապէս խնդրում է անպատճառ գալ ժողովի։ Եթէ այս ժողովը ևս չը կայանայ, հետևեալը տեղի կունենայ կիրակի, մայիս 27-ին, նոյն տեղը և նոյն ժամին։
340. 1—1

Ս. ԱՒԵՏԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ (Զգրաշէն) եկեղեցու համար հարկաւոր են
ԼԱՒ ՁԱՅՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՒ ԳՐԱԳԷՏ
ԵՐԵՔ ՏԻՐԱՑՈՒՆԵՐ
Ցանկացողները թող դիմեն առանձին խընդրագրով ծխական հոգաբարձութեան
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
(ա.օ.) 337. 3—2

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

L. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ, թարգմ. Սուրբաթեանի . . . . . 30 կ.
2) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմից Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրբաթեանի . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔԻՋՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջին մեզանից փողոր կանխիկ ուղարկելով, կը ստանան 10 % զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չէ լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(3) 10—8

ՆՐԱՆՑ, ՈՐՈՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՅԱՐՄԱՐ ԵՒ ԷԺԱՆ ԳՆԱԼ
ԱՄԵՐԻԿԱ,
խորհուրդ ենք տալիս գնալ ՀԱՄԲՈՒՐԳ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԾԻ շոգենաւերով։ Իւրաքանչիւր անձն, ով դիմում է մեզ, ձրիաբար ստանում է մանրամասն տեղեկութիւններ գլխաւոր գործակալութիւնից՝ C. Волффъ мл. ГАМБУРГЪ, Германія. S. Wolff jr. HAMBURG. Glockengiesserwall 13.
P. S. Խնդրում ենք գրել մեզ ռուսերէնով։
(չ. 2.) 106. 25—20

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ
հետեւեալ աշխատութիւնները՝
1) «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» (էջ 6000, 25 հատոր) գինը 50 ր., հատորը 2 ր.։
2) «ՍԱՄՍԱՑ ԾՈՒՐԻ ՑՈՒՇԻԿՆԵՐ» (500 էջ) գինը 2 ր.։
3) «ԳՐՈՂԻ ՎԻՃԱԿԸ» (պօէմ) գինը 1 ր.։
4) ՅՈՅԾԿԱՆԵՑԻ ԽՈՒԴԻ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։
5) ԳԻՒՂԻ ՀԵՐՈՍԸ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։
Հեղինակի հասցէն՝ Эривань, Астафьевская № 42, магазинъ Михаила Антонянцъ, переслать сел. Башкендъ, старш. учителю Григорію Баласанянъ. (ա.մ.) 271. 10—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный